№ 5—6 (240) XXIV ՏԱՐԻ ՄԱՅԻՍ—ՅՈՒՆԻՍ 1914

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENEVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ԱՆՎԵՐՋ ՊԱՏՐԱՆՔՆԵՐ

Թերահաւատութիւնը ծայր է տալիս արդէն ռէֆորմների վերաբերմամբ — անգամ այնտեղ, ուր երէկ տիրում էր ամենախանդավառ լաւատեսութիւն։ Բուռն, անվերապահ ցնծութիւնը կամաց-կամաց տեղի է տալիս լուրջ, պաղարիւն դատողութեան։

Հայ բուրժուազիան, „դիւանագիտական լուծումների" սիրահար մտաւորականութիւնը սկսում են թերևս ըմբռնել հայեացքներն ու գործելակերպը այն մարդկանց, որոնք չէին բաժանում ոչ այդ վարդագոյն օպտիմիզմը, ոչ այդ մանկական խանդավառութիւնը և քաղաքում էին—25 տարուայ աղէտաւոր փորձերից հրահանգուած—որ դիւանագիտական ռէֆորմների վրայ յոյս դնելէ առաջ, Ազգը ինքզինքը պէտք է ենթարկէ խորունկ ռէֆորմի, պէտք է նետէ իր վրայից թուլամորթ կրաւորականութեան նզովքը, պէտք է ներշնչուի ինքնօգնութեան առողջ ու փրկարար դաւանանքով, պէտք է զինուի և պատրաստուի, պատրաստուի...

„Պատրաստուելու պէտք չկայ, ասում էին մեզ, քանի որ իրերի բնական ընթացքը արդէն իսկ նպաստում է հայկական խնդրի լուծման, քանի որ միջպետական շահերը հրամայականօրէն պահանջում են այդ լուծումը և քանի որ Ռուսաստանը առել է մեր դատը իր հզօր ձեռքերի մէջ"։

Այդ վերջին փաստը մանաւորապէս „զօրաւոր" էր մեր չափաւոր ու խոհեմ հայրենակիցների բերնում։ Եւ նրանց խորիմաստ իդէալներն ազգային միամտութեամբ հոլովում էին մամուլի մէջ — „Ռուսաստա՜նը", „Քեռին", „մեր պատմական հովանաւորը", „մեր աւանդական պաշտպանը"... Եւ պատրաստ էին յանցագործ ու դաւաճան հռչակել սկեպտիկներին, որոնք շատ էլ չէին հրապուրուում „Քեռի՞" պաշտպանութեամբ և նրա իրական շարժառիթներով։

Մենք ևս, այո՛, ասում էինք, որ Եւրոպան, միջազգային խաղաղութիւնը շահագրգռուած են մեր հարցի լուծումով, բայց մենք գիտէինք նաև, որ այդ Եւրոպայի հրամանատար-դիւանագիտութիւնը միշտ չի մտածում և չի գործում յօգուտ խաղաղութեան, միշտ չի ձգտում երացնելու հրապարակից արիւնալի կնճիռները, այլ յաճախ—բռնուած ներքին անդարմանելի հակասութիւններով—նա ինքն է խառնակում կացութիւնը և կուրօրէն կամ գիտակցաբար ստեղծում է ընդհարումներ ու արիւնհեղութիւններ։

Մենք ևս գիտէինք, այո՛, որ մասնաւորապէս Ռուսաստանի կենսական շահը պահանջում էր ապահովել և ապրեցնել սահմանակից Թիւրքահայ ժողովրդին, որ մահմեդականութեան լայնարձակ ովկիանի մէջ միակ հաւատարիմ ու բարեկամ տարրն է Ռուսաստանի համար, նրա առևտրի ու արդիւնաբերութեան, լեզուի ու կուլտուրայի տարածման համար։ Եւ մեր կողմից ամեն բան արինք՝ արձագանգելու համար այդ շահերի գիտակցութիւնը ամենաբարձր վարիչ շրջաններում։ Բայց մենք գիտէինք դրա հետ նաև, որ Ռուսաստանի իրական շահը կարող են տարբեր կերպով ըմբռնել արդի ռէժիմի ներկայացուցիչները, աւելի ճիշտ՝ կարող են բնաւ չ'ըմբռներ Գորեմիկինների, Մակլակովների ու Շչեգլովիտովների մօտ դեռ հաւատոյ հանգանակ է հին, ճնշող քաղաքականութիւնը հայութեան հանդէպ, նրանք եռանդով շարունակում են Լովկասի մէջ Գոլիցինի գործը, նորէն „Պոլոժենիե"-ի ու հայ եկեղեցու խնդիր են դնում հրապարակի վրայ, նորէն փորձում են կաշկանդել մի հաւատ համայնքի ամենաանձնաս իրաւունքները. իսկ հալածանքը „Դաշնակցութեան" ու հայ երիտասարդութեան դէմ—ձերբակալութիւններով, դատերով, Սիբիրով ու կատորգայով—բնաւ դադար չունի։

„Ռուսական հզօր պաշտպանութեան" յոյսը պատրանք չէ՞ր արդեօք... Պետերբուրգի վարիչները երբևիցէ գէթ մի վայրկեան մտածե՞լ են արդեօք՝ լուրջ ու խորունկ բարենորոգումներ մտցնել Թիւրքահայաստանում և ապահովել միանգամ ընդմիշտ հայ ժողովրդի նիւթական, մտաւոր ու հոգեկան առաջադիմութեան գործը... Ինքը Սիլիւկով շատ ճիշտ նկատեց Մոսկուայի իր ատենախօսութեան մէջ, որ Ռուսաստանը միայն պատահաբար, մի յայտնի ակնկալից դրդուած, ասպարէզ եկաւ շատ թէ քիչ հիմնական պահանջներով՝ հայկական խնդրի մէջ։ Այդ „անակնկալը" Լիման ֆոն Սանդերսի միսսիոնն էր, որ մի վայրկեան խթանեց ռուս կառավարութեան եռանդը, դրդելով նրան հրապարակ նետել Հայոց Հարցը, իբրև անհրաժեշտ հակահարուած ընդդէմ գերման յառաջխաղացութեան։

Ցեսանք, սակայն, թէ որքան յարատև եղաւ Պետերբուրգի այդ կորովի դիմադրութիւնը... Ռէֆորմների ծրագիրը յօշոտուեց Գերմանիայի միջամտութեամբ, դուրս ձգուեց Եւրոպական հսկողութեան բանաձևը, դուրս նետուեցին գրեթէ բոլոր երաշխիքները, որ անհրաժեշտ էին ռէֆորմների անարգել իրականացման համար... Պետերբուրգը գուցէ շատ էլ չդժգոհեց գերմանական այդ միջամտութիւնից ու յօշոտումներից. և այսօր մինիստր Սազոնովի արտաքոց տրամաբանութեամբ Դուման ամբիոնից երախտագիտութիւն է յայտնում Գերմանիային՝ նրա „թանկագին աջակցութեան“ համար՝ Հայոց Հարցի մէջ...

Գէթ այդ համառօտուած ու յօշոտուած ձևով ռէֆորմները պէ՞տք է արդեօք գործադրուին։ Ռուսաստանը պէ՞տք է հետապնդէ գործադրել տալու մի հաւեստ ծրագիր, որ իր սեփական յօրինուածքն է։ Նշանները բնաւ խրախուսիչ չեն այդ տեսակէտից։ Ըստ երևոյթին, նոր հովեր անցան Նեվայի վրայից, „կուրսը“ փոխուեց և այսօր մենք ականատես ենք... „Քեռիի“ նահանջին։

Այլապէս՝ ինչպէ՞ս բացատրել այն լքուած, ողբալի, անօգնական վիճակը, որի մէջ գտնուում են երկու եւրոպացի քննիչները—Լեսանենկ և Հօֆ։ Ռէֆորմների ծրագիրը մնում է մի գորշ ու անկենդան թղթի պատառ, որ Թիւրք կառավարութիւնը սկսել է արդէն տրորել ու յեղաթիւրել իր աւերիչ թաթերով, առանց բողոքի մի ձայն լսելու դեսպանների կողմից։ Գերմանիան միանգամայն չէզոք է, եթէ չ՝ասենք աւելին, իսկ Ռուսաստանը այլ ևս չունի պաշտպանելու սիրտ ու եռանդ։

Ընդհանուր քննիչները արդէն իսկ յուսահատական ժեստեր են անում։ Բ. Դուռը յայտարարում է, որ ուզած վայրկեանին պիտի պաշտօնանկ անէ նրանց... Եւ հէնց այդպէս էլ տրամադրում է „Քեռիի“ ձեռքով մշակած և դեսպանաժողովի կողմից վաւերացուած ռէֆորմային ծրագիրը։

Միւս կողմից—ինչ որ աւելի ծանրակշիռ է և մտահոգիչ—սկսել են տենդային բանակցութիւններ Պետերբուրգի և Պ. Պոլսի միջև, տեղի են ունենում ռուս-թիւրքական բարեկամութեան ցոյցեր, հանդիսաւոր տեսակցութիւն Լիվադիայում, ուր ներկայ է և Պոլսի ռուսական դեսպանը։

Այս բոլորից յետոյ՝ յանցաւոր միամտութիւն է յուսալ, որ Ռուսաստանը պիտի կամենայ — երեքպետեան դաշնակցութեան չկամութիւնը խորտակելով - ռէֆորմ ու անդորրութիւն մացնել Հայաստանի մէջ։ Մինիստր Սազոնովի վերջին ճառը դուսայում, որ հակասութիւնների մի հիւսուածք էր, բնաւ չի մեղմում մեր մտատանջութիւնը և մենք ակամայ յիշում ենք մեր անմոռանալի Պրեսսանսէի վերջին խօսքը, որ ուղղեց մեզ մահից առաջ իր առանձնասենեակում. „Զգա՛ստ եղէք. այն պետութիւնն իսկ, որ այսօր ինքզինքը բարեկամ ու պաշտպան է ցոյց տալիս ձեր ազգային դատին՝ վաղը կարող է մի նոր արիւնառութիւն (saignée) սադրել Թիւրքաց Հայաստանում, իր նաւաճողական ծրագիրները առաջ տանելու նպատակով... Չեմ պնդում, որ անպատճառ այդպէս կը լինի, բայց կարող է լինել... Պատրա՛ստ եղէք“։

Հաւա՞ր չենք կանչում։ Մռայլ, յոռետես գուշակութիւններ չենք ուզում անել. տեղիք էլ չկայ։ Այնքան ահարկու փոթորիկներ անցնելուց յետոյ, այժմ չէ, որ հայ ժողովուրդը պիտի ընկճուի և յուսահատուի։ Կացութիւնը այսօր այնքա՞ն տարբեր է անցեալից։ Անգամ ամենախուլ գաւառների մէջ հայութիւնն այսօր այլևս նախկին անքան նախիրը չէ։ Իրաւունք ունի Պաուլ Ռորբախ, իրաւացի է և „Ֆրանկֆուրտեր Ցայտունգ“ի թղթակիցը. հայ ժողովրդական կազմակերպութիւնը այսօր մի ոյժ է Եւրկրի մէջ, որ դիւրին չէ խորտակել։ Քրդական պատուհասն էլ բաւականաչափ մեղմացաւ վերջին ձախորդ ապստամբութեամբ և 17 կախաղաններով։ Նոր „դէպքերը“—հների պէս—կարող են միայն տեղի ունենալ կենտրոնական կառավարութեան ցանկութեամբ ու թելադրութեամբ։ Իսկ երիտասարդ-Թիւրք կառավարութիւնը, նախ քան նոր „դէպքեր“ շղթայազերծելը, երկար կը մտածէ։

Այսուհանդերձ, սխալ է, գերազանցապէս թեթևամիտ ու յանցաւոր այն կարծիքը—ոմանց կողմից կովկասահայ մամուլի մէջ արտայայտուած — թէ երբէք այսուհետև անդորրութիւնը չի խանգարի Թիւրքահայաստանում, թէ երբէք Թիւրք կառավարութիւնը, իր կենսական շահը գիտակցելով, չի թոյլ տայ նոր հարուածներ ու արիւնհեղութիւններ, թէ երբէք Ռուսաստանն էլ չի հանդուրժի մասսային խուճապներ իր սահմանակից վայրերում... և այլն և այլն։ Այդ իմաստով գրեցին երկայնաշունչ յօդուածներ մի յայտնի մամուլի մէջ. մեր զառամեալ պոլիտիկոնները խորախորհուրդ պրոգնոզներով հմայում էին իրենց շրջապատը առանց գիտակցելու, թէ որպիսի պատասխանատուութիւն են ստանձնում իրենց այդ հանգստացուցիչ օրօրներով... Գրում էին մէկ բացորոշ դիտաւորութեամբ միայն — խանգարել կազմակերպութեան աշխատանքը, արգելք լինել դրամի զէնքի ու ինքնապաշտպանութեան նպատակով ի գործ դրուած ճիգերին։

Հարկ կա՞յ ջրելու այդ պառաւական բարբաջանքները։ Ռուսաստա՞նը չի հանդուրժի նոր „դէպքեր“ իր սահմաններում... Բայց նա հանդուրժեց փառաւորապէս, նոյնիսկ խրախուսեց այդ „դէպքերը“ 1895—96-ին։ Այսօր, իրաւ է, չկայ Լոբանով-Ռոստովսկի, բայց կայ Գորեմիկին և կայ Մակլակով։

Թիւրք կառավարութի՞ւնը կը գիտակցէ իր շահերը

և չի թողլ տայ նոր հակահայ արշաւանք.. Եթէ Պեռերբուրգը չի գիտակցում Ռուսաստանի իրական շահը, ապա ևս առաւել՝ Պոլիսը։ Թիւրքիան յաւիտենական Լէշն է, որ ոչ մի հողմ չի կարող շարժել ու մղել դէպի շինարար աշխատանք, դէպի ինքնակամ վերանորոգում, մի լէշ, որ դատապարտուած է յաւերժօրէն յօշոտելու և լափելու գիշակերներից։ Ձե՞նք տեսնում այնքան աղէներից յետոյ անգամ, Երիտասարդ Թիւրքիոյ շարունակական և ինքնասպան դաւերը Ալբանիայում, Փոքր-Ասիայում, Ցունաստանի դէմ։ Հայկական ռէֆորմները արհամարհելով, Եւրոպայի կօնտրօլը մերժելով, չե՞ն փութացնում Մոսկովի արշաւանքը և երկրի վերջնական անդամատումը...

Դոյրայեղ միամտութիւն է, ուրեմն, հանգստացնել ժողովուրդը, յոյս գնելով Թիւրքերի ողջմտութեան և ռուսների հայասէր տրամադրութեան վրայ։ Հայ ժողովուրդը պէտք է ապրեցնել Հայաստանի մէջ,— և ով որ ընդունում է այդ նպատակը, պէտք է ընդունէ և միջոցները։ „Դիւանագիտական միջոցը“, որին կառչել են փոքրագոյն ճիգի սիրահարները, ամենայետինն է և ամենաակարը։

ԶԱՒԱՐԵԱՆԻ ՀՈԳԻՆ*)

Ահաւասի՛կ մորդ արցունքն իմ ճակտիս,
Եւ իր աղերսն ու հեծեծանքը աչքերուս մէջ,
Ահաւասի՛կ զաւկիդ զարմանքն ու զարհուրանքը հոգիիս հետ՝
Ես քե՛զ կուգամ քու մաքուր մահդ ողջունելո՞ւ...

Եւ ես կ'ողջունե՛մ քեզ, ո՞վ Լոռիի լռին զաւակ,
Որ Սանահինին դէմ՝ դուն քու հոգիդ ծաղկեցուցիր.
Եւ ես կ'ողջունե՛մ քեզ Արարատի ազնի՛ւ որդի,
Արագածի՛ հարսնեղբայր, և Արաքսի՛ արգասիք...

Եւ ես կ'ողջունե՛մ քեզ, ո՞վ մարդկային հայելի,
Որուն մէջ մին իր հրաշքին ծանօթացաւ,
Եւ որուն մէջ ուրիշ մը իր սև դէմքէն էր շանթահար...
Եւ որուն մէջ անթիւներ առաքինութեամբդ օծուեցան...
. . . . . .

Եւ Նորէ՛ն քեզ կ'ողջունեմ, ո՞վ ձեռքէ ի ձեռք շրջող՝
Հողէ սափոր անպէրճանք,
Որուն մէջէն ժողովուրդ մը յուսահատ՝
Քու հոգիիդ հուրը խմեց...
. . . . . .

Ու դարձեալ կ'ողջունեմ քեզ, ո՞վ տառապանքի բեռնակիր,
Հասարակաց դուն ուղղամիտ սպասաւոր.
Ժողովրդի ժամակոչ, զրկեալներու իրաւաբան,
Եւ պարագլուխ խոնարհ և անդագար մշակ և մեծարժէք բանւոր...
. . . . . .

Եւ Նորէ՛ն քեզ կ'ողջունե՛մ, գերերջանիկ գիւղատնտես,
Երբ քու գութդ ուրիշին համար գարո՞ւն էր...
Երբ ամառդ առատութի՛ւնն էր թշուառին,
Երբ աշունդ արդի՛ւնք էր, և քու ձմեռդ արեգա՛կ...
. . . . . .

*) Առաջ ենք բերում մի քանի տուն Սիամանթօի «Զաւարեանի Հոգին» ձեռագրի Բ-րդ մերթածից, որ մոս ժամանակում ամբողջովին լոյս կը տեսնի թէ Կ. Պոլսում եւ թէ Կովկասում առանձին տպագրութեամբ:

Եւ ես թո՛ղ ողջունեմ քեզ, երէց եղբայրը մեր ամենուն,
Մեր ամենուն խնկարկու, մեր ամենուն մտրակիչ.
Եւ անկաշկանդ հոետոր և մաքսաւորաց հալածիչ..
Եւ դուն տաճարներ մաքրագործող ընկերային դազմրեցի..
. . . . . .

Եւ ձեռքերս դէպի՛ երկինք կ'ողջունե՛մ քեզ, ո՞վ հազագիւտ լուսաբար,
Որ իր կաթիլ մը իւղովն ուրիշին կանթեղը կը վառէր...
Եւ նորէն քեզ կ'ողջունե՛մ, ո՞վ նուիրական կաւագործ,
Որ ի՛ր անձին պատանքէն ուրիշին պատրոյգ միա՛յն կարեց..

ՍԻԱՄԱՆԹՕ

„ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

(ՏՈՒՐԲԱԼ)

Ծնած է Կարս, 1866 թ.։ Հայրը բնիկ բիթլիսցի էր, որ պատանեկութեան հասակէն եկած հաստատուած էր Կարս ու հոն ամուսնացած։ Փոքրիկ Յարութիւնը, ի բնէ աշխոյժ և յանդուգն, միշտ ձիու, որսի և հրացանի



Յարութիւն Կիրակոսեան

հետ գործ ունէր։ Նա չէր սիրեր իր բիթլիսցիական ծագումը, գրեթէ կը զայրանար, երբ մէկը յիշեցնէր չարաճճիօրէն՝ իր ծագումը։

Շնորհիւ իր արթնամտութեան, անոր հայրը նիւթական բաւական գիրք մը շինած էր Կարսի մէջ։ Հակառակ սակայն հօրը նիւթական կարողութեան հրապոյրներուն՝ 19 տարեկան հասակին մէջ Յարութիւնը կը նետուի յեղափոխական արիւնոտ ճամբան։ Այդ այն ժամանակն էր, երբ Կովկասի Հայութեան մէջ կը նկատուէր գրական-ազգային շարժում։ Ամեն տեղ, անկախ իրարմէ, կը կազմուէին խմբեր, որոնք համարեա նոյն ձգտումը ունէին։ Քրիստափոր, տոգորուած նարօտնիկներու գաղափարներով, Թիֆլիսի մէջ կը կազմէր բանուորական խմբեր։ Քիչ վերջ, Նա, Լուսուֆեան, Մարինեան, Թադէոսեան և մէկ երկու ուրիշ ականաւոր ինտելիգենտներ կ'ուրուագծէին ապագայ Դաշնակցութեան հիմքը։ Կեանքը ամեն տեղ դրուած էր նոյն պահանջների առջև։

Յուրբախն ևս մասնակցեր էր ոչ ուղղակի կերպով, այլ հեռուէ հեռու այդ շարժման։ Այստեղ ևս խումբ մը ըմբոստ ու գաղափարական երիտասարդներ գաղտնի ժողովներ կունենային, կը մշակէին ապագայ գործունէութեան ծրագիրը։ 90-ական թուականներուն կը միանան այդ բոլոր խմբերը մէկ անուան տակ—ծնունդ կ'առնէ Դաշնակցութիւնը։ Քրիստափոր, Զաւարեան և ընկերները կը թողուն իրենց համաշխարհայնական գաղափարները և կը նետուին հայ ազգային շարժման մէջ։

Առաջին օրէն իսկ, Յարութիւն կը մտնէ Դաշնակցութեան մէջ իր ընկերներով։ Շարժումը կը ծաւալի հեզհետէ։ Ան կը սկսի Յարութիւնի համար որոշ, գծած կեանք մը, ծրագրած գործունէութիւն մը, որուն կը փարի մեծ եռանդով։ Նա շատ կ'ոգևորուէր կուկուենեանի արշաւանքով։

94 թուին նա արդէն երկիր կը մտնէ... խմբին հետ Մուշ, Պուլանըգ, Խնուս և Աշչկերտ կը թափառի միշտ անվախ, միշտ մահը աչքին և վրէժը սրտում։ Պատնութեան մը հետևանքով՝ Պուլանըգի կառավարութիւնը կը սկսի խումբը հետապնդել։ բայց չի յաջողիր հետքն անգամ գտնել։ Պատնութեան հեղինակը կը յայտնի և շարաչար մահով վերջ կը գտնէ յեղափոխական վրէժխնդրութեամբ։

95-ի ջարդի օրերուն՝ Յարութիւնը Խնուսի մէջ էր։ կը շրջի գիւղերը, կը քարոզէ։ Մահաշունչ իրադէն արդէն կարդացուեր էր, կը սպասուէր օրէօր կոտորածի։ Հայերը կը դիմէին քիւրդ թոռուններուն և կը խնդրէին անոնց պաշտպանութիւնը։ Յարութիւնը Բուռնազ գիւղն

էր։ գիւղացիք նախապէս կը խնդրեն Յարութիւնէն ձայն չհանել, երբ գիւղը լեցուի քրդերով։ Նա կտրուկ կերպով կը մերժէ և միս-միտակ, ծառի վրայէն կը գիմադրէ քրդերու յարձակման։ Շնորհիւ իր ծայրայեղ յանդգնութեան կ'ազատուի ստոյգ մահէն ու կ'անցնի կովկաս։

96 թուին նա նորէն կը մտնէ երկիր և այս անգամ՝ Կարին։ Սակայն դժբախտաբար շուտով կը բռնուի ու Թաթուլին հետ կը բանտարկուի։ Որպէս ռուսական հպատակ, նա կը վայելէ ռուս կոնսուլի պաշտպանութիւնը ու հակառակ իր մեռնելու ցանկութեան, կը ղրկուի Ռուսաստան չափառի մը հսկողութեամբ։ Քեռին խումբ մը ձիաւորներով կը փորձէ փախցնել զայն, բայց նա յանձն չ'առներ, աչքի առջև բերելով այն պատասխանատուութիւնն ու դժբախտութիւնը, որին իր պատճառով պիտի ենթարկուէր չափառը և իր ընտանիքը։ Ոչ մի խօսք չի կարող զինքը համոզել և նա յօժարակամ կը յանձնուի ռուս կառավարութեան։ Չափառը հազիւ աւարտած էր իր պարտականութեան բաժինը, երբ արդէն Յարութիւն կը յաջողի փախչիլ քեռիի հետ և ազատուիլ։

Երկու տարի վերջ կուգայ Կարս և կ'ամուսնանայ բնիկ կարնեցի ազգականի մը հետ, որուն հայրը ևս իր կարգին սնուած էր ազգային գաղափարներով և ներշնչած զանոնք իր ապագայ փեսացուին։

Ամուսնութիւնը պատճառ մը չէր, որ նա լծուէր ընտանեկան խաղաղ կեանքին։ Ութ ամիս վերջ նորէն ձեռք առաւ թափառականի ցուպը.—անցաւ Կաղզուան, Աշէքսանդրոպոլ, Կարս և ամեն տեղ, ուր կը մղէր զինքը իր պարտականութեան ձայնը։

Լուանդուն պրոպագանդն ու գաղտնի ժողովները բուռն թափով յառաջ կը տարուէին։ Դաշնակցութիւնը ահագին կուսակցութեան մը վերածուած էր երկիրը կ'արձագանքէր դրսի կոչերը.—նոր, թարմ, սերունդ մը արդէն գործի վրայ էր։ Հայութիւնը կը պատրաստուէր ուժգին ու փառաւոր շարժման մը, որ պիտի ցրէր դարաւոր սարկութեան արատը մեր ցեղի ճակատէն։

Ահա՛ 1903-ը։ Ի՞նչ փառահեղ թուական, մանաւանդ ի՞նչ հսկայական թռիչք։ Ընդամենը 8 տարի առաջ, մորթուող, 300,000 զոհ տուող հայութիւնը կ'ողջուներ նոր արշալոյս մը, այլ ևս չկար հին, ագիրսող հայուհ թիւնը, այլ պահանջող, կուռող, յեղափոխական սերունդ մը։ Ռուսական յեղափոխութիւնը իր պատկառելի անցեալով չէր տուած այսպիսի փառաւոր արդիւնք, այն ռուսական յեղափոխութիւնը, որ իր հերոսներու անկուն կամքով ու մաքրութեամբ եղած էր մեր ոգևորութեան գրեթէ միակ աղբիւրը։

Այդ թուականի սկիզբներուն, մեկիկ մեկիկ խմբերը կ'անցնին դէպի երկիր։ Յարութիւնը այդ խմբերու խնամող, գուրգուրացող ձեռքն էր. իր տունը այն գլխաւոր կայանն էր, ուր կանգ կ'առնէին օրերով, ամիսներով մեր ամենապաշտելի գործիչները — Թորգոմ, Մենակ, Վաղարշակ և այլն։

Ցուն, հարստութիւն — ամեն ինչ դրած էր անոնց արամադրութեան տակ։ Ու ի՞նչպիսի քաղցր յուշերով կապուած էր անոնց, Թորգոմին՝ որ արդէն իսկ ընտանիքի մէկ անդամը կը համարուէր։ Մենակին՝ այդ անարատ, մաքուր բանաստեղծական հոգին, որու նման քչերը միայն տեսեր են։ Յարութիւնի փոքրիկ աղջիկն անգամ կը յիշէ զանոնք, „քիւլլահներ“ դրած այդ „անծանօթները“, և յաճախ ընտանիքը խաբելու համար՝ „այդ քրդերը“։ Առանձին ոգևորութեամբ Ցուրբախի կինը կը յիշէ Թորգոմի ու Մենակի դրուագներէն, անոնց ոգևորութիւններն ու չարաճճիութիւնները։

Պատրաստութիւնները տեսնուած էին։ „Մրրիկ“ խումբը ճամբայ պիտի ելնէր շուտով։ Խմբի մէջն էին ամենայայտնի կուռող ընկերները—Քեռի Արշակը, Խան, Առաքել, Պարմագսրգ Աւետիս, Սվազցի Մուրադ, Որսորդ Գէորգ, Քէօսէն և Ցուրբախ։ Խմբապետ նշանակուած էր Թորգոմը, որ նոր էր թողուցեր իր զինուորական ասպարէզը և եկած՝ զոհաբերելու իր կեանքը Հայրենի ազատութեան համար։ Քեռին՝ օգնականի, իսկ Ցուրբախը՝ դրօշակակրի պաշտօն ստանձնած էր։ Ոգևորութիւնը մեծ էր։ Կար սակայն մի արգելառիթ հանգամանք, այն՝ որ Յարութիւնը ընտանիքի տէր էր, ունէր զաւակներ, փոքրիկ զաւակներ... Ընկերներու մեծ մասը հակառակ էր Յարութիւնի երթալուն։ Մեղք էր անբախտացնել ընտանիքը մը։ Ցուրբախը սակայն չէր ուզեր լսել. ոչ մի աղաչանք, ոչ մի թախանձանք չկրցան կակղցնել անոր սիրտը։

„Մի՛ փորձէք զիս համոզել, եթէ արգելէք, ձեզ բոլորդ կ'երկնցնեմ սահմանի վրայ և ապա ես անձնասպան կ'ըլլամ“...

Կը մնար վերջին ելք մը։ Ընկերները կը դիմեն անոր կնոջ, կը պարզեն խնդրի էութիւնը և կուզեն հասկնալ անոր կարծիքը... „Ինչո՞ւ կ'արգիլէք զինքը. նա անպատիւ գործի մը համար չէ, որ կուզէ երթալ, եթէ այդպէս լիներ, առաջին գնդակը ես պիտի մխէի անոր կրծքին մէջ. սակայն քանի որ կուզէ զոհուիլ իր ժողովրդին համար, ես երբէք դէմ չեմ, ազատ է, Աստուածն իր հետ“։

Պատասխանը աւելի քան ոգևորիչ էր։ Ցուրբախ հասած էր իր նպատակին։ Խումբը մեծ խանդավառութեամբ ճամբայ ելաւ և առանց ոևէ միջադէպի հասաւ Սասուն։ Ամեն տեղ բախտը կարծես կը ժպտէր Յարութիւնին, քանի՞ անգամ ճողոպրած է մահէն։ Սակայն երկար չմնաց Սասուն, հազիւ ժամանակ ունեցաւ այցելելու Սերոբի գերեզմանը. հազիւ նա իր ուխտը կատարեց, վերադարձաւ Կովկաս՝ Սէրկէյի հետ նոր պատրաստութիւններ տեսնելու։ Կովկաս կը վերադառնայ նաև Թորգոմ, հետզհետէ նորանոր խմբեր ղրկելու համար։

Յաջորդ խմբերը, սակայն, չունեցան առաջինի բախտը։

Մենք փկանատես եղանք Թորգոմի, Խանի, Վաղարշակի, Նէվրուզի խմբերու եղերական նահատակութեան—ամենամեծ դիւցազներգութեան, զոր երբէք տեսած ըլլայ հայ յեղափոխութեան պատմութիւնը Խանասորէն յետոյ։ Տուրբախի ամենամեծ փափաքն էր թափել իր արիւնը հայրենի հողին վրայ ու այն ևս Թումանի և Մենակի հետ։ Նա չհասաւ իր մուրազին։ Թորգոմի վերջին արշաւանքին հետ հանգուցեալ Տուրբախը ամեն ճիգ կը թափէ երկիր անցնելու, սակայն ընկերները զինքը արգիլեցին (1904 թ.)։

Ամեն հայ ապագային հպարտութեամբ պիտի յիշէ այն օրերը։ Արեան ու հայրենիքի նշանաբանը միացուցած էր մեր սիրելի հերոսներն իրարու, ու նոյն արիւնն է իրարմէ բաժնած։

„Ամենայն տեղ մահը մի է, բայց երանի“...

Կը կարդամ այս գեղեցիկ տողերը, ստորագրուած Թորգոմի ձեռքով, նուիրուած ընկեր Տուրբախին։ Անկարելի է կարդալ և չյուզուել, չ'արտասուիլ ու չմխիթարուիլ միանգամայն։ Ի՜նչ անսասան հաւատք, ի՜նչ մեռնելու պատրաստականութիւն, բառ մը կտրիճներու սրտին մէջ, որոնց արիւնով պիտի սնէր ապագայ սերունդը...

Չյիշենք սակայն անցեալը, առանց այդ ալ յուզուած ենք նոր նահատակներով։ Շարունակենք։

Սասունէն Կովկաս գարձին՝ Տուրբախը չի կրնար հանգիստ մնալ. ռուսական կառավարութիւնը լսած էր անոր մասին։ Ստիպուած էր ժամանակ մը գաղտնի մնալ, թափառական, անտուն։ Երեխաները մեծցեր էին, բայց առանց հայրիկի ներկայութիւնը վայելելու։

Արդէն մենք կը գտնուինք մեծ թուականի մը ու հայ ժողովրդի համար մեծ դէպքերու շէմքին։ Կովկասի հայութեան կեանքն ալ սկսաւ փոթորկուիլ։ Եկեղեցական կալուածներու գրաւման գործը կըսկսէր, կամ սկսած էր արդէն։ Վտանգ՝ սահմանի այս կողմ, վտանգ՝ այն կողմ։ Մութ կամք, զօրեղ կամք մը պէտք էր՝ անցնելու համար այս երկու անդունդներէն։ Դաշնակցութիւնը ունեցաւ այդ կամքը։

Տուրբախը, կարսի ընկերներու հետ, նեռեցաւ ընդհանուր փոթորկի մէջ, իր մասնակցութիւնը բերաւ այն մեծ յաղթանակին, զոր առաջին անգամ ըլլալով հայ ժողովուրդը հաւաքաբար կը տանէր բռնակալութեան վրայ։

Պէտք էր այժմ փութալ, հասնել միւս տառապող ժողովուրդին։ Երկրի մէջ՝ Սասունն էր, որ կ'ալէկոծուէր։ Կովկասի մէջ քիչ յետոյ հայ-թաթարական ընդհարումներն էին, որ կըսպառնային ընաջինջ ընել փոքրիկ հայութիւնը...

Տուրբախը Թիֆլիսի մէջ է, քաջ, անվեհեր ղեկավարի դերումն։ Քանի՜ յաղթանակներ և որքա՜ն մաքրութիւն ու վեհութիւն կուի մէջ։ Նա խստիւ կ'արգիլէր մանաւանդ թալանը։ Հանգուցեալ Տուրբախը այդ տեսակէտէն եղած է օրինակելի. նա մինչև անգամ արժանացեր է ռուս թերթերու գովասանքներուն. քանի՜ քանի՜ անպաշտպան թիւրք ընտանիքներու կեանքն է ազատել, բայց և քանի՜ նամարդի գլուխն է թռուցեր կուի անողոք փոթորկում։

Անցան սուգի ու արիւնի օրերը, հայ ժողովուրդը յաղթող դուրս եկաւ. ա՛լ ոչ մի բռնապետ չէր կարող անպատիժ խաղալ նրա կեանքին հետ...

Թիւրքիոյ մէջ ծագեցաւ ազատութեան արևը. սահմանագլուխը ջնջուեցաւ ու երկա՜ր գրկախառնութիւն մը տեղի ունեցաւ ցեղի երկու հատուածներու միջև։

Տուրբախն ևս եկաւ երկիր ու հաստատուեցաւ Կարին։ Երկար չ'ապրեցաւ սակայն։ Ալկօոլը աւերեր ու քայքայեր էր իր ուժեղ մարմինը։ Վերջին տարին նա համարեա անկողնու մէջ էր. կը տառապէր, բայց և միշտ ժպտուն էր։ 1913 թ. մայիս 6-ին հրաժեշտ տուաւ կեանքին։

Խուռն բազմութիւն մը, անձրևոտ ու մռայլ օր մը, փոսը կ'իջեցնէր „Դաշնակցութեան“ յանգուգն զինուորը որ երբէք չճանչցաւ փախուստի ու մեղկութեան ճամբան։

Ջ.

Կարին, ապրիլ 1914

ԱՆՑԵԱԼԻ ԱՐՇԻՎՆԵՐԷՆ

ԱՆԴՐԱՆԻԿԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

II

Սասուն եւ Մուշ. — Կուսակցականներու համերաշխութիւնը. — Ապրօ.— Զարդի ուրուականը. — Յեղափոխականի հմայքը Սասնոյ մէջ եւ Մշոյ դաշտում. — Սերոբի թռիչքներ. — Զմեռը հայկական լեռնավայրում.— Ֆէդայու կեանքը.—Ապրօի եւ Թոմասի եղերական նահատակութիւնը.— Զիւնի տակ թաղուած.—Մատնութիւն եւ ձերբակալութիւններ.—Քարայրի մէջ.—Հրայր եւ Թաքուլ՝ Բասենում.—Բանտային չարչարանք եւ մահ.— Տերror. — Անօթի եւ թափառական· — Ղարա-Բեօփրիի մարագը եւ Խոզլուի ջրաղացը. —

Մօտաւորապէս օգոստոսի վերջերին էր, մենք հասանք Սասուն։ Հոն կը գտնուէր Օղիկեան Արմենակը, որ անգլիական կօնսուլն էր դրած հոն՝ նպաստ ցրուելու համար. հոն էր նաև Վարդան վարդապետը, մի որոշ չափով ալ սասունցի ժողովուրդ։ Իջանք նորէն դաշտ, ուր մօտաւորապէս 20 օր թափառեցինք Բերդակ, Ալուառինջ, Հաւատորիկ գիւղերը և Առաքելոց վանքը։ Ապրօի որոշմամբ մեզի ուղեկցորդ էր Զրից Համբարձումը, իսկ ինքը Ապրօն գացած էր Մուշ քաղաքը։ Այդ տեղերը Մուշ կը գտնուէին բոլոր դեսպանները և կը շարունակէին Սասունի անցեալ կռիւներու քննութիւնը։ Ապրօից լուր եկաւ, որ մենք նորէն Սասուն բարձրանանք։ Այդ ժամանակները հնչակեաններէն կային Ռուբէն անունով տղայ մը, որ Դաշտի մէջ պրոպագանդ կ'ընէր (ինքը ուսած էր Էջմիածին) և տիգրանակերտցի պարոն Թոմասը, որը Սասուն կը գտնուէր։ Այդ երկուսն

ալ շատ ազնիւ և շիտակ մարդիկ էին, եկան Ապրօի քով, տեսնուեցան և համերաշխութեամբ գործը առաջ կը տանէին։ (Ռուբէնի կեղծ անունը Խուրշուդ էր)։ Ռուբէն դաշտի մէջ հանգանակութիւն կ'ընէր (ցորեն կը հաւաքէր) սասունցիներու համար։ Կարճ ժամանակուայ ընթացքում Ռուբէնը մատնութեամբ ձերբակալուեց։

Երկրորդ անգամ Սասուն գնալնուս՝ եկան մըստր Բօլ, մըստր Ջորջ և մի եւրոպացի բժիշկ։ Հոն թափեցին մօտ 300 մշեցի բանուորներ, անմիջապէս փուռ շինեցին, հացերը սկսեցին եփել և ժողովրդին թային տալ։ Վարպետները սկսեցին տներ շինել։ Ցորենը միշտ կարաւանով կը կրուէր։ Շատ կարճ ժամանակամիջոցի մէջ տները շինուեցան, որովհետև ամբողջ սասունցիք ալ վարպետներու հետ կ'աշխատէին։ Քրդերուն իսկ փայտ կրել կուտային իրենց եզներով, որովհետև Սասուն փայտ չկայ (հարկաւ քրդերուն կը վճարէին)։ Այդ միջոցին եկաւ 75 ջորի բեռ բամբակ, ցրուեցին ժողովրդին. եկաւ նաև կարպետ, վերմակ, թաղիք, կացին, փէտտա, երկաթէ թիակ, բահ, անգլիական ձևի բուղուններ և այլն և այլն... Հաւասարապէս բաժանեցին ժողովրդին։ Գիւղերու մէջ գտնուած ջաղացներն ալ շինեցին և սկսեցին ցորեն ցրուել։ Նոյն ատեն դալորցիներին իւրաքանչիւրին սուլթանի հրամանով մի մի ոսկի, իսկ վերի գիւղերու ժողովրդին աւելի պակաս, բաժանեցին։ Ցատկացրած գումարին 30,000 ղուրուշ թիւրք պաշտօնեաներ կերան։

Մենք մեր աչքով տեսանք, թէ այդ ատեն ինչպէս Սասունը ազատ դրութեան մէջ կը գտնուէր, թէ ինչպէս թիւրք պաշտօնեաներն ու քրդերը կը վախենային։ Դաշտն ալ կիսով չափ հանգիստ էր և ժողովուրդն ալ ոգևորուած։ Յեղափոխականը սուրբի պէս կը պաշտէին։ Մըստր Բօլ և մըստր Ջորջ գիտէին մեր հոն ըլլալը և հայերուն կ'ըսէին. „այլ ևս ի՞նչ պէտք կայ, որ ձեր զէնքերը ձեռքից վայր չէք դներ. ոչ մի քիւրդ իրաւունք չունի ձեր սահմաններէն անցնելու, կառավարութիւնն ալ 7 տարի *) ձենէ տուրք չպիտի առնէ“։ Հայերը կ'ըսէին. „մեր սովորութիւնն է զէնք կրելը“։

(Շատախցիք այդ կռիւներուն չեն մասնակցած և կուէն անմիջապէս վերջը կառավարութիւնը հոն հաւաքած, տարած է մօտաւորապէս 120 զէնք, չախմախլը։ Կռի ժամանակ սպանուածներուն և անձնատուր եղողներուն ալ տարած են մօտ 400 չախմախլը)։

Հէնց այդ ատենները, երբ օտարազգիք զէնք վայր դնելու մասին այսպէս կ'ըսէին, հեռագիր եկաւ, թէ Բաղէշ կոտորեցին։ Այդ միջոցին նոյն այդ մարդիկ հայերուն կ'ըսէին. „ձեր զէնքերը վերցրէ՛ք եկէ՛ք մեր վրաններու քով“։ 50—60 զէնք ունեցող կերթան այդ վրանները պահելու։ Երկու օրէն վերջը Օղիկեան Արմենակը հոգ կը թողուն, իսկ իրենք կը բառնան իրենց ունեցածը ու կը մեկնին Բաղէշ։

Այդ ժամանակ Ապրօն մեզ գրեց անմիջապէս գալու Առաքելոց վանքը։ Մենք գացինք։ Ապա Ապրօն մեզ կանչեց Մուշ, որովհետև հոն, երբ Բաղէշի կոտորածի մասին լուր հասաւ (կոտորածէն օր մը վերջը), խանութները գոցեցին և կըսպասէին անխուսափելի կոտորածին։ Երկու հոգի Առաքելոց վանքը թողնելով՝ 8 հոգով գացինք Մուշ, ուր մնացինք 16 օր։ Խանութները մի ամիս գոց մնացին։

Մուստաֆա փաշան մի օր կանչել էր Վարդան վարդապետին և քաղաքական ժողովի անդամներին և ըսեր էր.

— Ինչո՞ւ հայերը չեն բանար իրենց խանութները։

Հայերը կ'ըսեն, մեր ձեռքէն չի գար նրանց ստիպելու բանալ խանութները։

— Տարօրինակ բան է, կ'ըսէ մութեսարիֆը, դուք մեզմէ կը վախենաք, մենք ալ ձեզնէ կը վախենանք—ձեր մէջ Հնչակն ու Դրօշակ կայ։

— Չգիտենք Հնչակն ու Դրօշակ ինչ է, մենք ահա ձեզնից կը լսենք։

— Դէ՜հ, չլինելուն եկէք երդում ըրէք։

Աւետարանը կը դնէ առաջին, կ'երդուեցնէ։

Քաղաքի հարուստները իմացած էին մեր հոն ըլլալը։ Այդ վախի ազդեցութեան տակ բոլորը մէկ կուգան առաջնորդարան և կը խնդրեն Ապրօին, որ տղաքը հանէ քաղաքէն՝ կոտորած սարքելու առիթ չտալու համար։ Նրանք կ'ըսէին, որ մութեսարիֆը երդուած է իրեն թագաւորի, Մահմեդի վրայ, որ մեր քաղաքի մէջ ոչինչ չէ ըլլալու *)։

Ապրօն գալիք չարիքների պատասխանատուութիւնը իր վրայ չ'առնելու համար՝ նրանցից ստորագրութիւն առաւ և մեզ Սասունի գծով ղրկեց Ս. Յովհաննու վանքը։ Հոն կը գտնուէին Նիւֆիւս մամուրի Իզէդ էֆէնտին և երկու ձիաւոր ոստիկան։

Գոմերցի երկու տղայ գացեր են Մուշ ցախ ծախելու. յանկարծ մէկը վիրաւորուած, միւսը ողջ լուր բերին մեզ, թէ Մուշ կը կոտորեն։ Իզէդ էֆէնտին, որ որոշ չափով հայերու պաշտպանն էր և համեղ կաշառակեր, և ոստիկանները անմիջապէս ձի հեծան և գացին Մուշ։ Ուզեցինք նրանց զէնքերը հոն առնել և իրենք ալ սպաներ, սակայն Մշոյ կոտորածի իրողութիւնը չէինք գիտեր և վարդապետները չթոյլ տուին այդ բանը ընելու, ըսելով որ Վանքի քանդման պատճառ կը դառնանք։

Երեկոյեան լուր առինք, որ մի թիւրք զինագործ իրեն խանութի մէջ 3 ատրճանակ կը բանայ իրարու վրայ և դրանից կը շարունակուի կռիւը։ Հայերի կողմից ոչ մի դիմադրութիւն չ'ըլլար, ոմանք խանութները կը գոցեն,

*) Երկու տարի չանցած՝ կառավարութիւնը սկսեց տուրք հաւաքել։

*) Մուստաֆա փաշան նայելով ուրիշ թիւրքերուն՝ լաւ մարդ էր. Մշոյ թիւրքերն ալ իրենց հայերուն լաւ կը նայէին։ Հատարակ խուժանը ոչինչ չէր կրնար ընել առանց այդ գլխաւոր թիւրքերու մասնակցութեան։

ոմանք ալ բաց կը թողուն և այնպէս կը փախնին իրենց տները։

Մուֆէսարիֆը և զօրքի հրամանատարը անմիջապէս կը մտնեն խուժանի մէջ և կը գոռան. „անմիջապէս բոլորիդ հրացանի կը բռնենք. թագաւորէն հրաման չկայ այդպիսի բան ընելու“։ Եւ կը կարդան սուլթանէն գնացած հեռագիրը, թէ „սրանից վերջը ռայիայի քիթը չպիտի արիւնի“։ Նոյն ատեն զօրքի հրամանատարն ու մուֆեսարիֆը կերթան առաջնորդարան 100 ձիաւորով և կ'ըսեն թէ ամեն բան կարգադրուած է, ոչինչ չվախնաք։

Այդ օրը սպաննուեց 7 մարդ և 25-ի չափ ալ վիրաւորուեց, որոնց թիւի մէջ նաև մի ընկեր, որ վիրաւորուած էր իր ձեռքից բացուած ատրճանակի գնդակով։ Ապրօն, որ այդ օրը հոն կը գտնուէր, կը վերցնի վիրաւոր ընկերոջ հրացանը, վերարկուի տակ կը թագցնի և վազ կուտայ դէպի առաջնորդարան (Ապրօն մշեցու շոր էր հագել)։ Դեռ առաջնորդարանի դուռ չհասած՝ կը նկատի, որ հոն կերթայ մուֆէսարիֆն ու զօրքի հրամանատարը, ուստի առանց նկատելու կը վերադառնայ իր տեղ։ Երբ մուֆէսարիֆն ու զօրքի հրամանատարը կը հեռանան առաջնորդարանէն՝ Ապրօն երկու ատրճանակ վրան կապած, կերթայ առաջնորդարան։ Նա հոդ կը գտնէ քաղաքի հարուստները, հոգաբարձուներն ու քաղաքական ժողովի անդամները, որոնք թէյի գաւաթով օղի կը խմեն եղեր, որպէս զի եթէ սպանուին՝ ոչինչ չզգան։ Ապրօի երևալը ոգևորութիւն կը ներշնչէ Վարդան վարդապետին և ուրիշ երկու ծանօթ մարդու։

***

Բաղեշի կոտորածէն օր մը վերջը, Սերոբը 12 ընկերներով եկաւ Սոխորդ *) գիւղը։ Հոն կը գտնուէր 24 չախմախլը և տղայոց ձեռքն ալ 12 կանոնաւոր զէնք։ Զուխուրայ կողմը գտնուած աշիրը գացած էր Սոխորդ՝ թալանը վերցնելու։ Սերոբը դուրս եկաւ իր ընկերներով և այդ 24 չախմախլիներով կուռեց և թողլ չտուեց, որ թալանը առնեն։ Քիւրդերու թիւը կ'ըլլար մօտաւորապէս 300 հոգի, բայց այնքան ալ կուռող ցեղ չէին։

Կռուի միջոցին դաղստանցի Սուլթան-բէկ ըսուած չէրքէզ հարիւրապետը գացած էր Սոխորդ։ Սերոբը կը նկատէ նրա և զօրքի գալը, թագցնել կուտայ կանոնաւոր զէնքերը և չախմախլիաւորներուն կը հրամայէ շարունակել կռիւը։ Սուլթան-բէկ կը տեսնէ, որ միայն այդ 24 հոգին են որ կը պաշտպանեն իրենց չախմախլիներով գիւղը, քրդերուց կը բռնէ մի քանի գլխաւորներ և հայերուց ալ մի քանի չախմախլիաւոր և կը բերէ Սոխորդ՝ քննութիւն կատարելու։

— Իշի գլուխ քրդեր, կ'ըսէ, դուք մօտաւորապէս 300 հոգի, իսկ սրանք 24 չախմախլը. այսչափ կուռեր էք և ոչինչ չէ՞ք կրցեր ընել։

— Վա՜յլա՜հ, աղա, էս հովիտս մէջէն մեզ վրայ Աստուծոյ կրակ կը թափէին. ասոնք մինակ չէին, ասոնց մէջ մաուզէրներով մարդիկ ալ կային։

— Զայներդ կտրեցէ՛ք, քրդեր, ես եկայ 24 չախմախլը տեսայ, որոնք կը կուէին ձեր դէմ. կուզէ՞ք ինձի խաբել։

Կը վերցնէ այդ քիւրդերը և նրանց հրացանները ու կը տանի Ախլաթ կը բանտարկի։ Յետոյ գաղտնի կ'ըսէ հայերուն, թէ ամեն բան գիտեմ, այնպէս որ խելացի գտնուեցէք։ Այդ մարդը ինչ հայ գիւղ որ երթար, շատ պարկեշտութեամբ կը պահէր ինքզինքը հայերու վերաբերմամբ։

Սերոբը մինչ այդ կառավարութեան աչքը չէր զարնուած, ուստի իր 11 ընկերները ուղարկեց իրենց գիւղերը, իսկ նրանց զէնքերը առնելով իր քով մնաց գիւղի մէջ քոլորովն ազատ։

Զմոռանամ ըսելու, որ Սերոբը սահման անցել էր Աշոտ-Թաթուլի և խնուսցի վալադ Աւագի հետ։ Սերոբը եկաւ մինչև Ախլաթ, Աւագը երեք ընկերով մնաց Խնուս, իսկ Թաթուլը անցաւ Բասեն։ Սահման անցած ժամանակին մի կէս ժամ գօրգօնի հետ կռիւ մ'ունեցած են, բայց ոչ մի կողմից կորուստ չէ եղած։ Մնացած ժամանակ գնացեր են շատ ապահով։

Նոյն ձմեռը մենք Ճացինք Կելիէկուզան, ուր Օղիկեան Արմենակը Ապրօի պատուէրով հաց և պառկելիք (վերմակ, անկողին) կուտար։ Ինքը Ապրօն մնաց Մուշ՝ տեղական գործերով պարապելու, որտեղից ամբողջ ձմեռը մեր և սասունցիներու հետ անդադար թղթակցութիւն կ'ընէր։ Այդ ձմեռը մեր կերածը ցամաք հաց էր, շատ հազիւ կերած ենք տաք կերակուր։ Մեզ տրուած ցորենիս և մեր վառելիք փայտը յաճախ մենք մեր շալակնիս կը կրէինք։

***

1896-ի մարտ ամսին Ապրօն Մուշէն եկաւ Շէնըք։ Նոյն միջոցին էր որ մշեցի Ղ. Մ-ը նամակի մը պատճառաւ փախստական եկաւ։ Ապրօն Շէնըքէն որոշեց երկու ընկեր՝ Բարսեղ և Արշակ, Ղ. Մ. չորս սասունցի տղերք, որ երթան խնուս, փոխադրեն այնտեղի զէնքերը։ Նրանց ճանապարհ դրաւ, իսկ ինքը ուներցաւ ընդհանուր սասունցիներու մի ժողով։ Այդ ժողովին Ապրօի հետ կար նաև տիգրանակերտցի պ. Թոմասը։

Զանազան հարցերու մասին խօսելուց վերջը՝ Ապրօն ըսաւ սասունցիներուն, թէ Դաշտը առած ենք մի ամբար ցորեն, ես ձեզ կ'առաջարկեմ գալ և փոխադրել Սասուն այդ ցորենը։ Բացի սեմալցիներից՝ բոլոր գիւղերու իշխանները համաձայնութիւն տուին։

*) Սոխորդ գիւղը, որ Սերոբի ծննդավայրն է, Ախլաթ կը գտնուի։

Նոյն օրը զինուորներուս Ապրօի անունով նամակ մը հասաւ Կէլիէկուզան։ Անմիջապէս երկու տղայ վերցուցինք այդ նամակը ու գացինք Հէնրը, յանձնեցինք Ապրօին։ Այդ տեղն մենք գրեթէ մերկ էինք։ Մեզ բաւական մխիթարելուց վերջը ըսաւ մեզ՝ տղե՛ր, ցորեն շալկեցէք և տարէք Կէլիէկուզան։ Մենք ըսինք՝ կարծեմ դուք ալ գործերնիդ վերջացրիք, քալէք մի տեղ երթանք։ Ապրօն և պ. Թոմասը մեզի պատասխանեցին, թէ քիչ մը գործ ունինք Սէմալ, երթանք նրանք ալ հասոզենք, որ համաձայնեն Դաշտի ցորենը փոխադրելու, իսկ երեկոյեան անպատճառ կուգանք ձեր քով։ Այդպիսով մեզ ճանապարհ դրին Կէլիէկուզան, ուր կըսպասէինք թէ երեկոյեան պիտի գային իրենք ալ։ Լաւ կը յիշեմ, որ մարտ ամիս էր։



ԱԲՐՕ
(ՄԿՐՏԻՉ ՄԱՀԱԿԵԱՆ)

Նոյն օրը Կէլիէկուզանցիք Մշից կը բերէին մօտաւորապէս 100 շալակ ցորեն։ Դեռ դրանք Սէմալ չհասած՝ Ապրօն և պ. Թոմասը գիւղէն դուրս կուգան մեր քով գալու։ Շալակաւորներն ալ նրանց յետևից կուգային։

Կէլիէկուզանի դիմացը գտնուած սարի կարմիր քարերը կը հասնին, մի քիչ կը հանգստանան հոդ, ապա կրկին կը շարունակեն իրենց ճամբան։ Շալակաւորներու առաջին ծայրը համարեա հասած էր Ապրօին և պ. Թոմասին. նրանք մի քիչ կը ցածրանան, իսկ Ապրօն և պ. Թոմասը արդէն իջած էին Հովիտը։ Այդ ճանապարհի հեռքը շինուած էր, որովհետև Իշխանձորի գիւղացիք մշուշի պատճառով այդ տեղով էին գնացեր։

Շալակաւորներու առաջին ծայրը գանուող մարդը իր կռնակի պարկը վար կը դնէ մի այծի մորթի վրայ և քաշ կուտայ կաժեր. այդ ժամանակ կը կոտրի ձիւնէ հիւսը։ Ապրօն և պ. Թոմասս Հովիտի յատակը գտնուելու պատճառով կը մնան ձիւնի տակ, իսկ այդ տղան, որ պարկը քաշ կուտար՝ ձիւնի յետևը ըլլալով բոլորովին չի կորսուիր ձեան մէջ, այլ գլուխը դուրս կը մնայ։ Յետևի շալակաւորները վազ կուտան, կ'ազատեն այդ տղին, իսկ Ապրօն և պ. Թոմասը կը մնան ձիւնի տակ։ Երեկոյեան ժամը 10-ի ժամանակներն էր։

Հիւսի գոռում, գոչիւն մենք ալ լսեցինք, բայց չ'իմացանք որ մէկ սարն էր։ Կէս ժամ չ'անցած ժողովրդի մէջ իրարանցում ընկաւ. ուր Աւօն պոռաց մեզի՝ Ապրօն ու Թոմասը եկե՞ր են. մենք ըսինք՝ չէ, չեն եկեր, երևի հիւսի տակն են մնացեր։ Անմիջապէս բոլոր ընկերներս, մաս մ'ալ ժողովուրդ հետերնիս՝ վազ ուինք այդ հովիտը։ Ձիւնը լցուեր էր 10 մետր խորունկութեամբ, իսկ ձեան երկարութիւնը տարածուած էր մի վերստի վրայ։ Երեք օր անընդհատ 150-ական հոգի կ'աշխատէին այդ ձիւնի վրայ. մի կողմից կը շրջէինք ձիւնը, միւս կողմից ալ եկեղեցու վարագուրի երկար շիշով կը շիշէինք, որպէս զի մարմնին դիպչի և կրնանք գտնել։ Ապրօի գդակն ու ձեռնափայտը, սև ակնոցներն ալ գտակին կպած՝ գտանք, իսկ դիակները մնացեր էին ամենախորը, չկրցանք գտնել։ Ձիւնը իրեն հետ բանդած բերած էր երկու ընկուզի ծառ իրենց արմատներով։

***

Զինուորներս մնացինք անտէր, անտիրական, անպաշտպան ու որբ։ Խնուս գացող տղերքն ալ, որոնք ճանապարհ չգտնելու պատճառաւ թափառեր էին Դաշտի դիւղերը, այդ լուրը առնելուն՝ ոմանք կը վերադառնան Սասուն, ոմանք ալ կը շարունակեն իրենց ճամբան։ Ռուբէնին բռնել տուող մատնիչը բռնել տաւ քեղուեցի Գէորգին, բաբերդցի Արշակին և ալարիսցի Մխոին։

Սասուն գտնուողներս որոշեցինք գալ Ախլաթ Սերոբի քով։ Նոյն ատեն Գէորգը, Յովհաննէսը և 2—3 տասունցի, որոնք ձերբակալուած էին Մուրադ էֆէնտիի հետ Սասունի կուէն վերջը Ցալորիկի Հարթք թաղի Ձկնկոլի վերև գտնուած այրի մէջ՝ մի սասունցիի մատնութեամբ բանտը ծակեցին ու փախան եկան մեր քով, իսկ մնացած սասունցիք ու Մուրադ էֆէնտին մնացին բանտը։ Մի ժամանակ վերջը մի քանի սասունցիք ալ փախան Հարթք թաղի ուէս Խաչօ Գասպարի հետ. մի քանիսներն ալ բանտի մէջ մեռան։

Մ.-ի փախստական ըլլալու ատեն՝ Դրչոի Եղիազարը հնչակեաններու կոմիտէն էր Մուշում։ Կառավարութիւնը դրա խանութը խուզարկելով գտաւ մի քանի նամակներ, մի քանի փամփուշտ և մի փափախ։ Ժամանակ մը ձերբակալուած մնալէ վերջ՝ Մուրադ էֆէնտու հետ աքսորուեցաւ։ Այդ մարդը նոյնպէս մեզ հետ համերաշխ կը գործէր։

***

Դառնանք Սասուն։ Գէորգին աւինք մի զէնք և թողուցինք այնտեղի ընկերներու քով։ Հոն մնացին Գէորգ, Համբարձում, ուռուխցի Յարութիւն, Զրեց Պետրոս և Քօլոզ Յովհաննէս։ Երզնկացի Ստեփան, զառացի Սենեքերիմ, կոմսացի Մարգար և ես իջանք դաշտ։ Ոչ փող ունէինք, ոչ ալ ոտնաման ու կ'ապրէինք սարի մը ստորոտ քարայրի մը մէջ, որ կը գտնուի Հաւասորիկ գիւղի վերև։ Լուր ղրկեցինք Վարդան վարդապետին։ Նա մեզ ուղարկեց տրեխ և հաց ու պանիր։ Երեք օր վերջը եկաւ բերդակցի Պետրոսը, որը գացեր էր Բասեն Ապրօի յանձնարարութեամբ։ Գացինք տեսնուեցանք այդ բերդակցի Պետրոսի հետ։ Աշոտ-Թաթուլը ուղարկած էր 2 մօսին իրենց փամփուշտներով և մի ձի։ Հրացանները քանդած, տեղաւորուած էին ձիու փալանի մէջ։ Այդպիսով Պետրոսը բերած էր այդ հրացանները և նամակներ *)։ Բերդակցի Պետրոսը բարձրացաւ դէպի սարը տղայոց քով, իսկ ես, երզնկացի Ստեփանը նամակներով գացինք Ախլաթ, ուր մնացինք 10—15 օր։ Սերոբը հոն պատսպարած էր զանազան պատճառներով փախստական եղած մի քանի տղաներ։ Սերոբը մեզ ալ առաջարկեց թէ՝ գնացէք ձեր զէնքերը բերէք Սասունէն և իմ տրամադրութեան տակ մնացէք Ախլաթի գիւղերու մէջ։

Երկու ընկերս վարդենիսցի Սարգիսի առաջնորդութեամբ վերադարձանք։ Եկանք Վարդենիս Երկաթ Բարեղի քով։ Նա մեզ ըսաւ, որ Ռուբէնին բանտի մէջ խիստ չարչարանքի ենթարկելով՝ սպաներ են, դաշտի մէջ ալ խուզարկութիւն կայ, ես չեմ կրնար ձեզ Սասուն ղրկել, որովհետև եթէ ղրկեմ՝ ձեր ձերբակալելու պատճառ կը դառնամ։ Նոյն առաւօտ, երբ մենք Վարդենիս եկանք, բնիկ մշեցի Մեսրոպ անուն տղայ մը, որուն կ'ըսէին Արաբ Յարօնացի, Ղարս գիւղի մէջ ձերբակալուած է ոստիկանների **) ձեռքով և բանտարկուած սենեակի մը մէջ։ Գիշերը այդ տղան պատուհանը կը քանդէ ու կը փախնի և ուղղակի կուգայ մեր քով։ Ան ալ խորհուրդ չտուաւ մեզ Սասուն գնալու և երեքս ալ վերադարձանք Ախլաթ, ուր կային Ղ. Մ., զառացի Սենեքերիմը, խութեցի Սաֆօն, կէլիկուզանցի Գրքօն, երզնկացի Ստեփանը, բուլանրիցի տղայ մը, ես և Բուլանրէ գաւառի Շէրեանշէխ գիւղացի Կոստան՝ տերբօրիստ, որը սպանած է Մուշ քաղաքի մի դաւաճան աէրտէր, որուն կը կանչէին Շէխօ։ Ախլաթի Մեծք գիւղացի Սրբօն վալադ ընկաւ այս ընկերներուս՝ Բուլանրէ տանելու համար։ Սերոբը տուած էր մի նամակ։ Քովերնիս կը գտնուէր պարտքով վերցրած 20 արծաթ և 4 հատ ատրճանակ՝ գրեթէ անկանոն։

***

Գացինք Բուլանրէ Կոփայ վանքը, այնտեղից փոխադրուեցանք Շէյխ-Եաղուբ գիւղը, ուր կը գտնուէր Յուրբաբ կեղծ անունով ղարսեցի (Կովկաս) Յարութիւնը։ Նա մեզ առաւ ոտքի ման, թաթ, վերցրեց մեր վրայի փողերը և իւրաքանչիւրիս բաժանեց 2—2 արծաթ։ Վերցնելով խնուսցի Խուրշուդին իբր վալադ՝ գացինք Եօնջալու, Մուրադ գետի եզերքը։ Ջուրը սաստիկ շատ էր. մի օր մնացինք հոն։ Մինչև այդ օրը մենք գիշերով կը քալէին, իսկ հոդ ջուրը անցնելու պատճառով ստիպուեցանք ցերեկով քալել։ Գիւղացիք տիկերով մեր շորերը անցուցին միւս ափը, իսկ մենք ալ գոմէշների պոչերից բռնելով անցանք գետը։ Ճանապարհնիս շարունակեցինք, հասանք Շէրեանշէյխի տակը։ Գիւղացիք տրտնջացին մեզ մի օր հոդ պահելու համար, որովհետև գիւղի մէջ կը գտնուէին 20 ձիաւոր քիւրդ և մի քանի չերքէզ, նմանապէս ձիաւոր։

Ճանապարհնիս շարունակեցինք դէպի Խնուս, հասանք Կովանդուկ գիւղը։ Նոյն ատեն իմացանք Պետօի կռիւը Վանի մէջ։ Էրզրումէն զօրքեր կերթային դէպի Վան։ Մեր վալադը շատ ճարպիկ էր։ Երեկոյեան դուրս եկանք Կովանդուկէն, կերթայինք Ղարա-Քէօփրիւ։ Ճանապարհին հանդիպեց 300 ձիաւոր։ Հէնց տեսնելուց՝ փախանք, թագնուեցանք խոտերու մէջ։ Մեր վալադը մենք 20 քայլ առաջ կերթար. յանկարծակի գալերնուս պատճառաւ՝ նա կանգնեց հրամանատարի առաջ։ Զօրապետը պոռաց. „Դուք ո՞վ էք"։ Վալադը պատասխան տուաւ. „Հայ գիւղացի ենք"։ Վալադ Խուրշուդին բռնեցին, ըսին.

— Ինչո՞ւ քու ընկերներդ փախան։

— Դիտցան թէ քիւրդեր էք, վախեցան փախան։

— Ո՞ւր կերթայիք։

— Կերթայինք Բերդ մանգաղ առնելու։

— Ցերեկով ինչո՞ւ չէիք երթար, գիշերով կերթայիք։

— Ճանապարհնիս քրդերէ վախենալնուս համար գիշերով կերթայինք։

— Դէ՛հ, լաւ, զաւակներս, ոչինչ չկայ, գացէք, կ'ըսէ զօրքի հրամանատարը և ձիաւորները կը հեռանան։ Երբ անոնք հեռացան, վալադնիս սուլելով մեզ հաւաքեց (մենք ալ կը լսէինք անոնց խօսակցութիւնը) ու գացինք Ղարա-Քէօփրիւ։ Վալադը ղրկեցինք գիւղը, որպէս զի մեզ տեղ պատրաստէ և իմանայ գիւղի դրութիւնը՝ թէ

*) Հրայրի խումբը, որ պէտք է անցնէր մեզնից 12 օր վերջը, անցեր է Բասեն միայն աշնանը ձիւն դնելու ժամանակ։ Թէ ինչու ձղձգւեր է խմբի անցնելը՝ մենք չ'իմացանք։ Զիւնի պատճառաւ Աշոտ-Թաթուլը և Հրայրը իրենց խմբերով մեացեր են այդ ձմեռը Բասենի մի քանի կտոր գիւղերու մէջ։

**) Այդ ժամանակները կըսպանուի Ղարս գիւղի ռէս Միրոն, որը շատ կորիծ մարդ մ'էր և շատ էր մասնակցած Մուսաբէկի Գիւլէի փախցրած խնդրին։ Մի քիւրդ, որ բարեկամաբար կը հետևի եղեր Միրօին, խարդախութեամբ հրացանի մէջ փամփուշտ է դրեր և Արտօն տակ կը զարկէ, կըսպանէ։

զօրք, քիւրդ կա՞ր։ Վեր վալագը գնաց գիւղ, բայց ճանապարհին իրեն ծանօթ քիւրդերը բռներ են և քիւրդերէն խաղ կանչել տուեր, որովհետև յայտնի էր, որպէս քիւրդերէն լաւ խաղ կանչող։ Մենք գիւղէն դուրս կը սպասէինք մարագների մօտ։ Սպասեցինք 2 ժամ, ոչ ոք չեկաւ։ Լուսը բացուելուն մօտ էր Աշխատելով մարագի դուռը հանեցինք, ներս լցուեցանք։ Բոլորս սաստիկ յոգնած էինք։ Ցղերքը պառկեցան, քնեցին, իսկ ես արթուն մնացի, պահապան եղայ։

Արևը բաւականին բարձրացած էր։ Նկատեցի, որ մի կին եկաւ դրան առաջ կողով մը շալկած, բանալին մացուց ներս, դուռը բացաւ։ Ես դրան յետև թագնուեր էի, իսկ տղերքը պառկած էին դրան ճիշտ դիմացը։ Երբ կինը ներս մտաւ, տղայոց տեսաւ, վախեցաւ, ուզեց փախչել։ Թագնուած տեղիցս բռնեցի նրան և ըսի. մայրի՛կ, չվախենաս, մենք հայ ենք. եկանք, լուսը բացուաւ, մտանք ձեր մարագը. յոգնած, նեղուած ճամբորդ ենք, կարելի՞ է երթաս հաց բերես մեզի և ըսես այս ինչ, այն ինչ մարդուն, որ գան մեր քով։ Գեղը զօրք կամ քիւրդ կա՞։—Զաւակներս, 25 քիւրդ կայ։ Ցղերքս արթնցան, մտիկ կ'ընէին մեր խօսակցութեանը աչքերը ճմռելով։ —Բացի ես երկու մարդուց՝ ուրիշ ոչ ոքի չպիտի ըսես։ Ձեր տնեցոց ալ չպիտի ըսես։ — Չէ՛, չէ՛, չեմ ըսեր, քոռցե՞ր եմ որ ըսեմ ուրիշներուն. ես էդպէս բաներ գիտեմ։ Կողովը յարդ լեցուց ու գնաց։

Մի ժամ չանցած՝ պառաւը կրկին եկաւ կողովը կռնակը դրած։ Ձեր երկու մարդուն ըսի, քրդերու պատճառով չկրցան գալ, ըսաւ։ Բայց կողովը լիքն էր. կողովի չորս բոլորքը դրած էր քեալամի թուփ, մէջտեղը դրած էր պղուզ մը մածուն և 20 հաց, ծածկած կրկին կաղամբի թփերով. յանձնեց մեզ, կերանք, կշտացանք։ Մեզի կրնա՞ս կուժ մ'ալ ջուր բերես, ըսինք։ Համբերեցէ՛ք, զաւակներս, կը բերեմ, ըսաւ։ Գնաց և կէս ժամ վերջ ջուրն ալ բերեց։ Ապա յարդը լեցուց կողովի մէջ գնաց։ Գնալէն առաջ ըսաւ՝ աղե՛րք, էնպէս բերեր եմ էս մածունն ու հացը, որ մեր տնեցիք ալ չեն իմացեր։

Երեկոյեան մեր վալագը և նոյն գիւղացի մի տղայ եկան մեր քով. գնացինք Խոզլու։ Մարգիկ կերթան գիւղ, կը տեսնեն, որ 400 զօրք կը գանուի հոն, գիւղի տակին վրաններ զարկած։ Գործին ծանօթ մարդկանց իմաց կուտան, թէ մի քանի տղայ ենք բերեր, որոնք կուզեն Բասեն երթալ։—Կը խնդրենք, կ'աղաչենք գիւղը չգան, մենք իրենց հաց կը ղրկենք. գիւղի մէջ ալ 400 զօրք կայ, գան՝ կը ձերբակալուին։ Այս զօրքերն ալ Վան կերթային։ Գիւղի մէջ գրեթէ բան չէին թողեր ուտելու, երեք օր շարունակ կերեր, խմեր, կշտացեր էին։ Երկու օր սար մնացինք, ոչ հաց բերող եղաւ, ոչ ալ վալագ եկաւ մեր համար։ Անօթի, յուսահատ դրութեան մէջ սարից ցած իջանք, գիւղէն մի քիչ հեռու գտանք մի ջաղացք, պատուհաններէն ներս նայեցանք, տեսանք մի փոքր աղայ և 50 տարեկան մարդ մը։ Ներս մտանք, բարևեցինք և հարցուցինք. դու ի՞նչ մարդ ես, ըսաւ.

— Ջաղացպան եմ։

— Սա տղան ո՞վ է։

— Իմ տղաս է։

Մարդը մի քիչ կը վախնար, տեսնելով վրաններս կապուած 4 ատրճանակ և փամփուշտներ։ Ըսինք.

— Եղբայր, մենք ճամբորդ ենք, անօթի, քաղցած մնացեր ենք, մի բան ըրէ։

— Եթէ ջաղացքին նայէք, ես ձեզի հաց կեփեմ։

— Մենք ինքներս հաց կ'եփենք, ջաղացքին ալ կը նայինք. դուն գնա այս ինչ, այն ինչ մարդուն ըսէ, որ գան մեր քով։ Բայց ուրիշին ոչինչ չպիտի ըսես։ Ըսաւ՝ չեմ ըսեր։ Երեխան ալ կուզէր տաներ, բայց մենք չթողինք, ըսինք որ երեխան մեր քովը կը մնայ մինչև ձեր գալը։

Անմիջապէս ամբարից ալիւր հանեցինք, 30-ի չափ բաղարջ եփեցինք. տեսանք մարդն ալ եկաւ։

— Ո՞ւր է, ինչո՞ւ չ'եկան էդ մարդիկ. ըսաւ՝

— Գիւղը չէին։

— Բայց դու մի ժամ ուշացար, եթէ գիւղը չէին, իսկոյն կը վերադառնայիր, ինչո՞ւ սուտ կը խօսիս որ։

Խօսելու տեսն մարդը կը կմկմար։ Մեր ընկերներէն մէկը ձեռքը ատրճանակին զարկաւ ու պոռաց մարդուն վրայ՝ շո՛ւտ իրաւն ըսէ, չէ նէ կը սպանեմ։ Ընկերոջս թեւը բռնեցի, ըսի մի՛ զարներ, շիտակը կը խօսէ։

— Ա՛յ մարդ, ըսի, շիտակդ խօսէ, չէ նէ կը փնտրենք. մենք գիտենք, ախպէր, որ էն մարդիկ գիւղն են։

— Ախպէր, ըսաւ, խօսքը մեր մէջ մնայ, էն մարդիկը գիւղն են. ինձի հարցուցին ի՞նչ մարդիկ են, հրացա՞ն ունին, չէ նէ չունին, քանի՞ հոգի են. ես ալ պատմեցի ինչ որ տեսեր էի. յետոյ նրանք ըսին թէ՝ գնա ըսէ գիւղը չեն։ Ահա՛ շիտակն էս է։

— Զօրքը գացա՞ծ է, թէ գիւղն է։

— Պատրաստ են, առաւօտուն պիտի երթան։

Վերցուցինք մեր աւելորդ հացերը, դրինք տոպրակներս մէջ և ըսինք.

— Մնաս բարով, ախպէր, մենք կերթանք Բասեն, բայց մեր հոս գալը քու շապիկդ ալ չպէտք է իմանայ։ Եթէ մի չարիք դուրս եկաւ, քեզ ալ, երեխայիդ ալ կը սպանենք. եթէ մենք չկրցանք սպանել, մենք յետոյ ուրիշ եկողներ կը սպանեն։

— Հա՛, եթէ ինձնից բան դուրս գայ՝ սպանեցէ՛ք, իմ արիւնը ազգին հալալ։ Ցղուն ալ մի քանի պատուէրներ տալով՝ մնաս բարով ըսինք ու հեռացանք։ Մեր հեռանալու տեսն տեսանք, որ մարդուս աչքէն արցունք կուգար։

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՍՕՑԻԱԼԱԿԱՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԿԵԱՆՔԸ

I

Մեծ անցքեր են տեղի ունենում եւրոպական իրականութեան մէջ—միանգամայն խրատական և սփոփիչ։ Էւօլիւսիօնի ռիթմը նոյնն է. երկու դարաւոր շարժումները — ազգային-քաղաքական և ընկերային-սօցիալական—շարունակում են իրենց զուգահեռ ընթացքը, մերթ ընդ մերթ խանգարելով կողմնակի և վաղանցուկ հովերով։ Որքան աւելի ենք առաջ գնում պատմութեան հետ, այնքան աւելի և աւելի է պարզւում, որ այդ պատմութեան յառաջատար խթան-ոյժը միմիայն սօցիալական-դասակարգային կռիւը չէ, այլ և քաղաքական-ազգայինը։ Որքան աւելի է առաջ սահում համաշխարհային քաղաքակրթութեան անիւը, այնքան աւելի ցայտուն ձևով հրապարակ է գալիս սնանկութիւնը կօսմօպօլիտական վաղեմի հաւատամքի, իր ծանօթ լօզունգներով. „Աշխատաւորը հայրենիք չունի“, „Ուր շահ—այնտեղ հայրենիք“։

Սօցիալիզմը հսկայական նուաճումներ է անում ամենուրեք—բայց և ամենուրեք սօցիալական այդ սրարշաւ յառաջխաղացութեան հետ մենք տեսնում ենք ազգային իրաւունքների անվերապահ և զօրաւոր շեշտումը։ Ֆրանսիական ժողովուրդը, վերջին ընտրութիւններին, 100-ից աւելի ընկերվարական ղրկեց պարլամենտ, բայց նոյն Ֆրանսիայի մէջ ամենքը, անգամ ծայրայեղ ընկերվարականները, մի ջինջ, անկեղծ հայրենասիրութեամբ տոգորուած, ձգտում են մշակել ամենաբանաւոր ծրագիրը՝ հայրենի զինւորական ոյժերը մարզելու և աճեցնելու՝ գալոց ձախորդ պատահականութիւններին պատւով դիմաւորելու համար։ Նոյն Ֆրանսիայի մէջ, սօցիալիզմի ամենայանդուգն և ամենաշիտակ ներկայացուցիչներից մինը, Դիւստաւ Էրվէ, հանդիսաւորապէս լքում է իր վաղեմի և հնացած տեսակէտները, իր երբեմնի անարիւն կօսմօպօլիտիզմը և փարում է առողջ հայրենասիրութեան դաւանանքին, ճալով հանդերձ խանդաւառ և համոզուած ընկերվարական։

Սօցիալիզմը յաղթական մուտք է գործում Ֆրանսիայի ամենախուլ գաւառներն անգամ, բայց միևնոյն Ֆրանսիայում, մայրաքաղաք Պարիզի մէջ, ռազմական հայրենասիրութեան ասպետ Դէրուլէդի յուղարկաւորութեանը մասնակցում են 500,000 քաղաքացիներ՝ բոլոր դասակարգերից ու դաւանանքներից, տեղի է ունենում մի վիթխարի և շքեղ ապօթէօզ։

Դիմեցէք դէպի արևելք, դէպի հարաւ և դէպի հիւսիս. Ամեն տեղ նոյն յաղթական արշաւը ընկերվարական գաղափարների և ամեն տեղ նոյն սիրուած ժողովրդական Դէրուլէդները։ Որպիսի՜ հոյակապ յուղարկաւորութիւն՝ ունգարական Կօշուտին, ֆինլանդական Մրիսէլիին... Հարիւր հազարաւոր բազմութիւն է, որ թաւալւում է դիակառքերի ետևից—ջերմեռանդ և պատկառոտ։ „Ազգային ինքնօրինութեան“ մի մի խորհրդանիշ են այդ անունները, և նրանց շարանը չի ընդհատւում, որովհետև պատմութիւնը դեռ տրամագիր չէ դատաւճիռ արտասանելու Ազգայնութեան ու հայրենիքի դէմ։

Ընդհակառակը, այդ պատմութիւնը միշտ նորանոր ազգութիւններ է դուրս կոչում կորածութեան անդունդներից։ Իրլանդիան այսօր արդէն քաղաքական ինքնավարութեան ճանապարհի վրայ է և Home Rule-ի քուէարկուած նախագիծը գալիս է նոր ուղղութիւն և մղումն հաղորդելու իրլանդական ճակատագրին։ Ահա մի մեծ իրողութիւն, որ համաշխարհային արժէք ունի։ Որքա՜ն ճիգ ու արիւն, քանի՞ յուսահատ մաքառումներ... Եւ ահա ազնիւ գործը վերջապէս յաղթանակած, Իրլանդիան պիտի ունենայ շուտով ինքնօրինութիւն և ինքնավարութիւն։

Նոյնը չպիտի՞ լինի և ամեն ուրիշ տեղ.. Անգամ գոռոզ Բիսմարկեան Գերմանիան հարկադրուած չպիտի՞ լինի վերջիվերջոյ նոյն իրաւունքները զիջելու Ալզաս-Լօրէնին, որը արդէն իսկ երկարատև ըմբոստութեան ու մաքառումի շնորհիւ խլել է որոշ զիջումներ։ Լեհական Պոզնանը, Սիլէզեան, իտալական Տրենտն ու Տրիեստը ռումանական Տրանսիլվանիան և տասնեակ ուրիշ նուաճուած փոքրիկ ազգութիւնները չպիտի՞ յանգին նոյն „Հոմ Ռուլին“..

Ազգերի ծագման ու կազմակերպման պրոցէսը չի վերջացած. նա կը շարունակւի... Մինչև ե՞րբ—ո՞վ կարող է ասել. գուցէ յաւիտենօրէն։ Եւ—դարձեալ շեշտելու է—հակասութիւն ու անպատեհութիւն չկայ այդ պրոցէսի և սօցիալական շարժման ընթացքի միջև։ Երկու պրոցէսները իրենց դարաւոր պատմութիւնն ունին, երկուսն էլ ծագում՝ ու զարգանում են նոյնպիսի բնական անհրաժեշտութեամբ, ունենալով մարդկային և զանգւածային հոգեբանութեան մէջ նոյնքան խորունկ և բանաւոր պատճառներ։ Միջազգայնութեան (*internationalisme*) առողջ հաւատամքը բնաւ չի վնասում ազգայնութեան ու հայրենասիրութեան նոյնպիսի առողջ հաւատամքին։ Երկուութիւն չկայ, չպիտի լինի, երկու հոսանքները փոխադարձաբար լրացնելով, պէտք է ձգտին համերաշխօրէն քաղաքակրթութեան նոյն մեծ դատին ծառայելու։ Ազգային ինքնուրոյնութեան պահպանումը նոյնքան անհրաժեշտ է համաշխարհային կուլտուրայի համար, որքան ազգերի սերտ գործակցութիւնը՝ առևտրի, հաղորդակցութեան, արուեստի, գիտութեան ու գրականութեան ասպարէզում։ Կապիտալիզմը սահմանել է աշխատանքի լայնարձակ բաժանումն այլևայլ ազգերի միջև, և այդ հոյակապ միջազգային

մրցարանում իւրաքանչիւր ցեղ միշտ աւելի և աւելի գիտակցում է իր յատուկ կոչումը, իր խաղալիք դերը ընդհանուր քաղաքակրթութեան մէջ։ Այդ գիտակցութիւնը, աշխատանքի այդ բաժանումը, հանուր ու սերտ գործակցութեան երկաթէ անհրաժեշտութիւնը ստեղծում են հետզհետէ մարդկութեան բազմաթիւ ու բազմապիսի հատուածներից մի հսկայ ու ներդաշնակ օրգանիզմ, որի ծոցում ազգային ու դասակարգային հակամարտութիւնները դատապարտուած են վաղ թէ ուշ չքանալու և արիւնոտ բազխումները՝ վերածուելու խաղաղ, օրինաւոր մրցակցութեան։

***

ԻՐԼԱՆԴԻԱՆ ԴԵՊԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ.

Լուծուելու վրայ է մի հինաւուրց „Գորդեան հանգոյց“։ Իրլանդիան—դա հին վէրքն է Մեծն Բրիտանիոյ մարմնի վրայ։ Եւրոպայի ամենաազատ սահմանադրական երկիրը, որ աշխարհի չորս կողմում սփռել է ազատ, ինքնավար ու բարգաւաճ գաղութներ, խորթ ու ճնշող մայր է հանդիսացել իր թեւի տակ գտնուող կաթոլիկ Իրլանդիայի համար։ Բրիտանական լուծը հարկաւ տարբեր է թիւրքական, ռուսական, գերմանական լծերից, բայց և այնպէս խիստ զգալի է մի հպատակ ժողովրդի համար, որի կաշին աւելի նուրբ է, գիտակցութիւնը աւելի պայծառ, մշակոյթը աւելի բարձր, քան թիւրքիայի, Ռուսաստանի, Գերմանիայի ժողովուրդներինը։

Դարաւոր է այդ ճնշող հպատակութիւնը, որ երբեմն —18-րդ դարում, օրինակ—արտայայտուել է բրիտանական մարակի դաժան հարուածներով—և Իրլանդիայի մի շարք սերունդներ ըմբոստացել են ու պայքարել, մեծ մասամբ խաղաղ, օրինական միջոցներով, ձգտել են նուաճել իրենց նեիրական հայրենիքի համար այն համբաւաւոր Home rule-ը, որ այսօր ահա քուէարկուած է վերջապէս։ Պատի՛ մեծ երկրի ազատամիտ և սոցիալիստ կուսակցութիւններին։ Մեծ Ծերունին, Ուիլեամ Գլադստոն, այնքա՞ն նիզակներ էր ջարդել իրլանդական ինքնավարութեան համար։ Լորդերի պալատը ընդդիմադրում էր միշտ իր բացարձակ veto-ն։ Այսօր, սակայն, փոխուել է կացութիւնը։ Դեմոկրատիզմը, ռամկավարական հոսանքը տիրական դիրք է ստացել կայսրութեան մէջ և 1911-ից ի վեր խափանել է լորդերի այդ veto-ի իրաւունքը։ Մի օրէնք, մի bill, երբ նա արդէն երեք անգամ անցնում է Համայնքների Պալատից՝ բացարձակ, անվիճելի օրէնք է. նա դարձեալ ներկայացուում է լորդերի ժողովին, բայց դա սոսկ ձևական մի արարողութիւն է. այդ ժողովը գրեթէ այլ ևս գոյութիւն չունի և երկրի ճակատագրի միահեծան տէրը պարլամենտն է, Համայնքների Պալատը, ազգի օրինաւոր ներկայացուցչութիւնը։ Ցաւոնի է, որ թագաւորի իշխանութիւնն ևս լոկ անուանական է։

Եւ ահա Իրլանդական ինքնավարութեան օրէնքը երրորդ անգամ քուէարկուած Համայնքների Պալատում (351 ձայնով ընդդէմ 274-ի)։ Խոչընդոտները շատ էին դիմադրութիւնը՝ ուժեղ։ Պահպանողականները ի գործ դրին իրենց բոլոր հնարքները՝ օրէնքը վիժեցնելու համար։ Նրանք ոտքի հանեցին Իրլանդիայի ամենահիւսիսային նահանգը, Ուլստեր, մի նոր Ալանդէ, բողոքական ընդդէմ կաթոլիկ ինքնավարականների։ Պայթեց քաղաքացիական կռիւ։ Ապա պահպանողականները Օքստրուկսիոնի դիմեցին պարլամենտում։ Այնուամենայնիւ, ազատական մինիստրութեան նախագահ Ասքուիթ յամառօրէն առաջ տարաւ իր ծրագիրը։ Առայժմ յաղթանակը ազատականների, սոցիալիստների և իրլանդական հայրենասէրների կողմն է։ (Սոցիալիստները, բնականաբար, իրենց ձայնը տուին ի նպաստ Իրլանդիայի ազգային ինքնավարութեան)։

Օրէնքը քուէարկուած է. առաջին անգամն է Մեծն Բրիտանիոյ պատմութեան մէջ, որ մի օրէնք անցնում է, առանց լորդերի վաւերացման, հակառակ նրանց։

Դրամայի առաջին գործողութիւնն էր, որ խաղացուեց։ Օրէնքը ընդունուած է, սակայն իսկոյն չպիտի դիմեն գործադրութեան։ Դեռ բալդութիւններ կարող են ծագել։ Ուլստերը սպառնում է նորէն բռնկուիլ, պահպանողականները շարունակում են իրենց յուսահատ ընդդիմութիւնը։ Եւ որովհետև այդ զարմանալի երկրում իրերը ընթանում են սովորաբար հանդարտ ու խաղաղ, առանց արիւնահեղ ցնցումների ու հարուածների, որովհետև անգլիական բնաւորութիւնը սքանչելիօրէն մարզուած է խաղաղ, օրինական պարլամենտարիզմի մէջ, ուստի հաւանական է, որ այս ծանրակշիռ պարագայում ազատական կառավարութիւնը միջոցներ կը գտնէ հաշտեցնելու պահպանողականներին, թերևս զատելով Ուլստերը մնացած, ինքնավար Իրլանդիայից։ Ցամենայն դէպս, էական զիջումի մասին խօսք այլ ևս չի կարող լինել, պարլամենտն է, որ որոշել է տալ Իրլանդիային ինքնավարութիւն—այն պարլամենտը, որ բարձրագոյն ու ամենակարող հեղինակութիւնն է երկրի մէջ։ Իրենք պահպանողականներն ևս, որ նոյնպէս խիստ տարբեր են մեր յիշատակած երկիրների պահպանողական տարբերից (աւելի մշակուած ու բարեկիրթ, աւելի շիտակ և ընդհանրապէս աւելի տոգորուած ժամանակի, առաջադիմութեան ոգով), վերջիվերջոյ, հաւանականօրէն, տեղի կը տան, կը համակերպին։

***

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՑԱՂԹԱՆԱԿԸ ՖՐԱՆՍԻԱՑՈՒՄ.

Հազուագիւտ յաղթանակ էր։ Ի՜նչ մեծագործ ոյժ է պրոպագանդը, անդուլ, յամառ, սթափեցուցիչ պրոպագանդը՝ քաղաքներում ու գաշտերում, գործաբա-

նաւոր պրոլետարիատի և աշխատաւոր ու տառապող գիւղացիութեան մէջ։ Դրան ենք, անշուշտ, պարտական գերմանական և մանաւանդ ֆրանսիական սոցիալիզմի անսովոր թռիչքը, որ նեղն ընկած հակառակորդները ձգտում են բացատրել բոլորովին կողմնակի, պատահական պատճառներով։ Ի՞նչ տարակոյս՝ որ աշխատաւոր ընդհանրութեան գիտակցութիւնը արթնացել է ամենուրեք և նրան այլ ևս խաբել չի լինի։ Որքա՜ն հնարքներ ի գործ դրեց պահպանողական և յետադէմ բանակը՝ ընտրող ժողովրդին մոլորեցնելու համար։ Ինքը Հանրապետութեան նախագահը, որ ընտրուած է շնորհիւ աջակողմեան ձայների, թեև էր տալիս այդ բանակին. ճառեր է, որ տեղում էին սոցիալիզմի ու բադիկալիզմի ուրուականների դէմ։

Ոչինչ չ՚օգնեց։ Ամենամեծ յաղթանակողը դարձեալ սոցիալիստ կուսակցութիւնն եղաւ։ Նրանից յետոյ գալիս են արմատական սոցիալիստները, որ կազմում են պարլամենտի ամենասաւաը հատուածը։ Անասելի ջարդ կրեցին աջակողմեաններն ու բոլոր չափաւոր հատուածները։ Պարտուեց անարգօրէն և բրիանիզմը — մի նոր չափաւոր հոսանք, որ վերջերս ծայր տուեց հռչակաւոր ուխտադրուժ Արիստիտ Բրիանի, Բարտուի և Միլլրանի առաջնորդութեամբ և որ „խաղաղացման“ (apaisement) պատրուակով կուզէր վերստին հրապարակ կոչել յաղթահարուած կղերականութիւնը։ Բրիան դարձել էր բոլոր պահպանողականների և օպպորտիւնիստների խնկարկուած բուրմը, նա կոչուած էր հզօր բազուկով զսպել, յետ մղել սոցիալիզմի յարաճուն և ահաւոր պատուհասը։ Ահա սակայն նրա կուսակցութիւնը ջարդ ու փշուր, ընդամենը մէկուկէս տասնեակ հոգով է մտնում պատգամաւորական ժողով։ Ռէնէգատի աստղը մարած է. այսուհետև իր դէմ ունենալով միանգամայն Ժօռէսին ու Պլէմանսօին, վաղեմի կարմիր անիշխանականը հազիւ թէ նորէն հրապարակ նեաւի մինիստր-նախագահի և նոյնիսկ պարզ մինիստրի պաշտօնով։ Այդպէս է պատժուում դաւաճանութիւնը։

Ընկերվարականները 1,200,000 ձայն շահեցին երկրի մէջ և նրանց թիւը պարլամենտում 74-ից բարձրացաւ 102-ի։ Աւելորդ է յիշել, որ այդ յաղթանակը շշմեցուցիչ տպաւորութիւն գործեց ոչ միայն ֆրանսիական, այլ և ամբողջ համաշխարհային բուրժուազիայի վրայ։ Ի՞նչ կը լինի 10, 20, 30 տարուց յետոյ, եթէ իրերի զարգացումն ընթանայ ներկայ տեմպով, արագութեամբ... Այդ հարցումն է, որ սարսափեցնում է սոցիալական անշարժութեան և բուրժուական առանձնաշնորհումների ջատագովներին։

Այժմից արդէն ընկերվարական կուսակցութիւնը ծրագրել է մի շարք խորունկ ռէֆորմներ, որ նա պիտի ձգտէ իրագործել, թեև թեւի տուած արմատական տարրերի հետ։ Արդէն պատրաստւում է մի ուժգին գրոհ զինուորական եռամեայ ծառայութեան դէմ, որ մտցրեց նորերս Բարտուի մինիստրութիւնը և որ իրաւամբ համարում են աւերիչ երկրի համար և ֆրանսիական ժողովրդի ուժերից վեր։ Ընկերվարականները պահանջում են հիմքից վերակազմել զինուորական սիստեմը, համապատասխանեցնել այն՝ մի մեծ, շարժուն, առաջադէմ Հանրապետութեան ոգուն, ֆազմակերպել բանակը միայն ու միայն ինքնապաշտպանութեան նպատակով, քայլել աստիճանաբար դէպի հանուր, քաղաքացիական, համաժողովրդական բանակի սիստեմը։ Ֆրանսիան, ասում են ընկերվարականները, միևնոյն է իր զինուորական ոյժերով միշտ լինելու է ստորադաս վիճակում հանդէպ Գերմանիայի, այն պարզ պատճառով՝ որ Ֆրանսիայի ազգաբնակութիւնը գրեթէ երկու անգամ նւազ է Գերմանիոյ ազգաբնակութիւնից։

Աւելի ծանրակշիռ է զուտ սոցիալական ռէֆորմների ծրագիրը, որի իրականացման հետապնդում է ընկերվարութիւնը տասնեակ տարիներից ի վեր։ Վերջին ընտրութիւնները հնարաւորութիւն են ներկայացնում՝ իրագործելու մի կարևոր մասը սոցիալիստական այսպէս կոչուած նւազագոյն ծրագրի։ Եւ ամենէն առաջ՝ հարկային սիստեմը։ Մտցնել եկամտային տուրքը, թեթևացնել աշխատաւոր զանգուածների բեռը, ստեղծել ամենուրեք մարդավայել կեանքի պայմաններ, կուռել տգիտութեան և տառապանքի դէմ, դնել անսասան հիմքերի վրայ աջխարհիկ կրթութեան գործը, որ արդէն իսկ յաղթանակել է Ֆրանսիայում կրօնա-կղերական վաղեմի տիրապետութեան աւերակների վրայ, վերացնել նախապաշարումների ու անապաշտութիւնների հետ նաև անարգող անսանձ կեղեքումները դաշտերում և արդիւնաբերական կենտրոններում, մաքառել ազդու, պետական միջոցներով չքաւորութեան, անաշխատութեան, թոքախտի ու այլ համաճարակների, ալքոհոլիզմի ու անառակութեան և հազարաւոր այլ ախտերի դէմ, որոնք բոլորն էլ գանւում են սերտ, փոխադարձ կապակցութեան մէջ, քանի որ բոլորն էլ գրկում են կապիտալիզմի սիստեմից... Խախտել հետզհետէ այդ սիստեմի հիմնասիւները և առաջնորդել տառապող ընդհանրութիւնը դէպի գալոց հաւասարութեան իրաւակարգը, — ահա ֆրանսիական (ինչպէս և ամբողջ համաշխարհային) ընկերվարութեան նպատակը, առաքելութիւնը։ Թւում է թէ հեռու չէ մեծ վերիվայրումի ժամը...

* *

ԴԷՊԻ ՊԷՌ-ԼԱՇԷԶ.

Սովորական ուխտագնացութիւն չէր այս տարի։ Սոցիալիզմի յաղթական վերելքը մի չտեսնուած խանգաւառութիւն էր տարածել պարիզեան արուարձաններում և յիսուն հազարի չափ հոծ բազմութիւն էր, որ մայիս

24-ին ընկերվարական հռչակաւոր պարագլուխների, Ժօռէսի ու Վայիանի ուղեկցութեամբ, շարժուեց դէպի Պէռ-Լաշէզի գերեզմանոցը, ուր հանգչում են 1871-ի „կոմմունա"ի (*La Commune*) հազարաւոր նահատակները։

„Քառասուն երեք տարի առաջ, մայիս 24-ին—այսպէս էր գրուած Ժօռէսի ձեռքով, Թափօրի մասին Ծանուցումի մէջ—նախարարապետ Թիէր, ներկայացուցիչը մի բուրժուազիայի, որ երկիւղից գազան էր կտրել, ջարդի ենթարկեց այն սքանչելի պարիզեան ժողովուրդը, որ միանգամայն հայրենասէր ու ընկերվարական, փորձեց դիմադրել պատերազմի աղէտին *), խորտակելով այն ռէժիմը, որի ծնունդն էր պատերազմը։ Գնանք Պէռ-Լաշէզ, հոյակապ, ազդու Թափօրով, գնա՞նք այր, կին, մանուկ, ներշնչելու այն հերոսների ու նահատակների հիշատակով, որոնք մեռել են իրենց Իդէալի համար, ընկել են բուրժուազիայի գնդակների տակ, որովհետև կամեցել են իրականացնել սոցիալիզմն ու միջազգային խաղաղութիւնը"...

Եւ շարժուեց բանւորական ծովը։ Ո՞րպիսի հատուցում... Քառասուն երեք տարի յետոյ՝ ո՞րպիսի շքեղ բեղմնաւորումն այն Գաղափարի, որի անունով սարսափահար բուրժուազիան խոշտանգել ու կոտորել էր այնտեղ, Պէռ-Լաշէզի գերեզմանոցում, տասնեակ հազարաւոր պրոլետարներ։

Շարժւում է յիսուն հազար բազմութիւնը կարմիր դրօշակներով դէպի „դաշնակիցների պատը" **) (*le Mur des Fédérés*), անցնում է հանդարտ ու մելամաղձոտ՝ պսակազարդ Պատի առջևից, ողջունում է հարազատ մեռելներին և ամենքի դէմքերի վրայ ցոլում է յոյսն ու հաւատը, գալոց յաղթանակի հպարտ գիտակցութիւնը, ամենքն էլ ասես մտածում են. „Քառասուն երեք տարի առաջ դուք պարտուեցիք ընկերներ, որովհետև քչւոր էիք և անպատրաստ, յախուռն էիք և գահավէժ ձեր առնական թռիչքների մէջ, և վերջապէս Պարիզն էր միայն ապստամբը և մարտնչողը, Ֆրանսիան, գաւառը լուռ էր, հնազանդ. իսկ այսօր, երբ մենք միլիոն ենք, Պարիզում և Պարիզից դուրս, իսկ վաղը, երբ պիտի դառնանք միլիոններ ու միլիոններ քաղաքներում և գաւառներում, կազմակերպուած, գիտակից և պատրաստ—„Կոմմունան" պիտի պայթի յաղթական ու անխորտակելի և գաղիական աքլորի կանչը սասանեցուցիչ զօրանլով պիտի արձագանքէ նաև Ֆրանսիայից դուրս, ամենտեղ, ուր կոմմունիզմը, ընկերվարութիւնը պարզել է իր ազատարար Դրօշը"...

***

*) Ֆրանս-պրուսական պատերազմն էր, որ հասցրել էր Ֆրանսիան հոգեվարքի։

**) Այդ պատի տակ են հրացանի բռնել „կոմմունար"ները և նրա առջև են ընդհանուր ու վիթխարի փոսի մէջ ամփոփուած հազարաւոր դիակները։

ՖԵՐԵՆՑ ԿՕՇՈՒՏԻ ՄԱՀԸ

Ահա մի անուն, որ մի դրօշ էր—մաքառական անկախութեան դրօշը։ Մայրաքաղաք Բուդապեշտը և ամբողջ Ունգարիան անհամար պատգամաւորութիւններով մասնակից էին յուղարկաւորութեան լայնածաւալ թափօրին։ Ողջ երկիրը սուգ էր հագել և 200,000-ի չափ մի բազմութիւն տանում էր մաքառական ազգայնութեան այդ Դրօշը դէպի գերեզման։

Սուգը յարուցել էր ոչ մեռնողի անձնաւորութիւնը, այլ անունը։ Ֆերենց Կօշուտ կենտրօնական դէմք չէր նորագոյն Ունգարիայի, ոչ թէ իր անձնական կարողութիւնների շնորհիւ, այլ որովհետև իր անմահ հօր անունն



Լուդվիգ Կօշուտ

էր կրում—այդ անուն բոլոր փայլն ու հմայքը։ Ֆերենց Կօշուտ դրօշակակիրն էր Անկախութեան կուսակցութեան, որովհետև որդին էր հռչակաւոր „դիքտատորի", Լուդվիգ Կօշուտի։ Կարող մարդիկ շատ կան Ունգարիոյ մէջ, բայց „ազատագրական աւանդութիւնների" պաշտօնական կրողը մէկ անհատ միայն կարող էր լինել—„դիքտատորի" ժառանգը։ Այդպէս է հրամայում ժողովրդային հոգեբանութիւնը... Ապշեցուցիչ է „անուան" թովքը... Անուն՝ որ էմբլէմ էր, խորհրդանշան, անուն՝ որ մարմնացումն էր ազգային բոլոր փառքերի։ Բուդապեշտը սուգ էր հագել, որովհետև նրան թւում էր, թէ իր լաւագոյն երազներն էր թաղում գետնի տակ։ Այդ փառաշուք թափօրի հանդէպ իւրաքանչիւր ունգարացի յիշում էր 1848 և 49 թուականները, ազգային դրօշի հպարտ ծածանումը, հայրենիքի անկախութեան յայտարարումը դիքտատորի բերանով, ապստամբական արիւնալի թռիչքները, ջարդը և նահանջը։

Գոռ, յաղթական կռիւներին յաջորդեցին ցաւագին պարտութիւնը. Լուդվիգ Կոշուտ բռնութեան ճիրաններից իր գլուխն ազատելու համար, փախել էր արտասահման և ապաստան խնդրել օսմանեան կառավարութիւնից։ Ինն տարեկան Ֆերենցի հետ նա գնաց հաստատուեց Փոքր Ասիոյ Քիւթահիա քաղաքում *)։

Տարիներ յետոյ հայր և որդի փոխադրուեցին Լոնդոն։ Յետոյ—Իտալիա։ Ժամանակը առաջ սահեց, միահեծան բռնապետութիւնը ջնջուեց Աւստրօ-Ունգարիայի մէջ, հաստատուեց 1867-ի իրաւախոհութիւնը (Ausgleich), որով մաջառ հայրենիքը ստանում էր լայն ազատութիւն և ինքնօրինութիւն։ Կոշուտ, սակայն, շարունակում էր մնալ իր Ֆերենցի հետ արտասահմանում, չնայած հայրենակիցների պաղատագին կոչերին ու յորդորներին։ Նա չէր ուզում իրաւախոհել ու հաշտուել „Երդուեալ Ռոխի“ (Հաբսբուրգեան միապետութեան) հետ, նա անհաշտ պատերազմ էր յայտարարել միապետին, պահանջում էր լիակատար անկախութիւն իր Ունգարիայի համար. և ուխտել էր հայրենիք չվերադառնալ, քանի դեռ չի իրագործուի իր երազը։

Ուխտին հաւատարիմ մնաց մեծ աքսորականը։ Քառասուն ու հինգ տարի ապրեց Ունգարիայից դուրս, տարագիր ու թափառական և.. իր դիակը միայն վերադարձաւ հայրենիք։ 1894-ին իտալական Տուրին քաղաքից Լուդվիգ Կոշուտի նշխարները արտակարգ հանդիսաւորութեամբ փոխադրեցին Բուդապեշտ։ Դագաղին ուղեկցում էր ինքը Ֆերենց Կոշուտ, որ 45 տարուց ի վեր նոյնպէս առաջին անգամ էր ոտք դնում հայրենի հողի վրայ։ Ցեղի ունեցան ամբողջ երկրում հսկայական ցոյցեր ու թափօրներ։

Լռեց ահարկու Դիքտատորի ձայնը, որ երբեմն սարսափն էր Հաբսբուրգեան արքայատոհմի։ Վերջինը, երկիւղով ու վրէժխնդրութեամբ համակուած, թոյլ չուեց անգամ, որ ունգարական ազատութեան Ռահվիրային երախտագէտ հայրենակիցները արձան կանգնեն Մաջառստանի մայրաքաղաքում. և այսօր ուղևորը զարմանքով է արձանագրում այդ պակասը՝ Բուդապեշտում պատելիս։

Լուդվիգին յաջորդեց Ֆերենցը։ Յաջորդեց, բայց առանց փոխարինելու։ Քաղաքականապէս անփորձ մի մարդ, միջակ կարողութիւնների տէր, ամբողջ կեանքն էլ ապրած հայրենիքից դուրս։ Ազգը, սակայն, պէտք ունէր նրա անուան։ Եւ Ֆերենցը սիրով ընդ առաջ եկաւ ազգին, տուեց նրան իր կախարդիչ անունը, դարձաւ երեսփոխան և պարագլուխ Անկախութեան Կուսակցութեան։ Յետոյ—և մինիստր։ Հայրը կատաղծրէն բողոքում էր գերեզմանից... Որդին դրժել էր հօր ուխտը, նա արդէն իսկ հաշտւում էր տէրտղ կացութեան հետ, ընդունում էր աւստրօ-մաջառ Իրաւախոհութիւնը։

Անկախութեան կուսակցութիւնը իրօք նա էլ չէր ղեկավարում, այլ Ապպօնի և ուրիշները։ Ինքը լոկ անուանական ղեկավար էր։ Հօր մոլեգին անհաշտութեան (intransigeance) տեղ՝ նրա մէջ թագաւորում էր յարմարուելու ուժեղ ցանկութիւնը։ Եւ Ֆերենցը „յարմարուեց“ շարունակ, թեք ճանապարհով սահեց աստիճանաբար մինչև կատարեալ հաշտութիւն Հաբսբուրգեան միապետութեան հետ։ Մի գեղեցիկ օր—1905 թուին—նա ներկայացաւ Վիեննայի արքայական պալատում Ֆրանց Յոզեֆ թագաւորին։ Հայր-Կոշուտը շարունակում էր գալարուել գերեզմանի մէջ։ Նա անիծել էր այդ թագաւորին, որ հեղինակն էր 1849 ի մաջառական նախճիրների, նա պահանջել էր գահընկէց անել այդ թագաւորին։

Ֆերենց սաստկապէս վարկաբեկ եղաւ իր հայրենակիցների աչքում, Անկախութեան Կուսակցութիւնը պառակտուեց։ Որդին ոչինչ չ'աւելացրեց հօր հմայքին և թէում է թէ երէկ, Բուդապեշտի հանդիսաւոր ու վիթխարի յուղարկաւորութեան միջոցին՝ Ունգարիան ողբում էր ոչ թէ որդուն, այլ Հօրը...

***

ՑՈՒԶՈՒՄՆԵՐ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ.

Մի ցոյց Անկոնայի մէջ, մի ընդհարում ցուցարարների ու ոստիկանութեան միջև, գնդակների մի տարափ, բանուորների երեք դիակ... Եւ ահա արագ արագ տարածուեց արձագանքը և Իտալիան բռնուեց ըմբոստացման հրդեհով։ Վրէժ աղաղակեց միլիոնաւոր պրոլետարիատը Հռոմում, Նապոլում, Միլանում, Տուրինում և ամեն տեղ։ Բարրիկադներ, կռիւներ, տանտեակներով դիակներ, հարիւրներով վիրաւորներ։

Այդպէս է միշտ այդ զարմանալի երկրում։ Կայծից

*) Մաջառների, ինչպէս և լեհերի մէջ, թիւրքիան և թիւրքերը միշտ մի առանձին համակրանք են վայելել, շնորհիւ այն ասպնջականութեան, որ վաղեմի օրերում սուլթանները ցոյց են տուել թէ մաջառ և թէ լեհ ապստամբապետների վերաբերմամբ (լեհերին՝ 1831-ի ազգաւոր ապստամբութիւնից յետոյ)։ Այդ համակրանքին, մաջառների մօտ աւելանում է և ցեղային, թէկուզ հեռաւոր, արիւնակցութիւնը։ Անգամ Համիդի օրով՝ մաջառ ղեկավարների շրջանում թիւրքական դատը մեծ ժողովրդականութիւն ունէր։ Եւ երբ—1902 թ. յունուարին—փոքր եղաւ, ունգարական պարլամենտի շէնքում իսկ, յուզելու հայոց հարցը, մերկացնելու սուլթանական ոճիրները Հայաստանում, մաջառ հեղինակաւոր դէմքերը և ամենէն առաջ Անկախութեան կուսակցութեան առաջնորդները՝ Ֆերենց, Կոշուտ և կոմս Ապպօնի՝ միաբերան յայտարարեցին Դաշն. Արևմտեան Իւրոպի պատգամաւորին. „Մեր բոլոր համակրանքը ձեր դժբախտ ժողովրդի կողմն է, բայց մի մոռացէք և այն, որ մենք յաւիտենօրէն երախտապարտ ենք օսմանեան կայսրութեան, որը մեր ազգային ամենամեծ աղէտի միջոցին (1849 թուին) վերհանձնաբար ապաստան է տուել մեր շարժման առաջամարտիկ հերոսներին“։

մինչև հրդեհ—մի քայլափոխ է միայն։ Ցեղային խառնուածքն է զօրաւոր ու ցասկոտ, կրքերն են միշտ վառ և տիրական։ Աւելացրէք յաւիտենական ու յեղափոխիչ պատուհասը — աշխատաւոր զանգուածների համատարած թշուառութիւնը, որ այդ սքանչելի երկրի մէջ մի առանձին, ողբերգական բնոյթ է առնում և որ միշտ սնուցանում, պահպանում է ըմբոստ տրամադրութիւն, յեղափոխական մթնոլորտ։

Իտալիան մի զարմանալի համադրութիւն է դեմոկրատիկ գաղափարների և բռնութեան ու ստրկութեան սիստեմի։ Քաղաքական ռէժիմը համեմատաբար մեղմ է, շատ աւելի մեղմ, քան օրինակ Գերմանիայում։ Պարլամենտը — ընտրած ընդհանուր, հաւասար ձայնաւորութեամբ — տեր է երկրի մէջ և թագաւորը Եւրոպայի մեղմագոյն վերապետաներից է, միանգամայն յարգող Սահմանադրութեան և ժողովրդական ներկայացուցչութեան իրաւունքների։

Սակայն, Իտալիայում — աւելի քան որևէ այլ տեղ — շեշտւում է նորագոյն տնտեսագիտութեան հռչակած իրողութիւնը՝ որ քաղաքական ամենալայն ազատութիւններն անգամ չեն կարող արգելել տնտեսական հակամարտութեան չարիքները, կապիտալիզմի աւերածը։ Անդունդը շատ է խոր հարուստի և աղքատի, հողատէր ու փողատէր փոքրամասնութեան և ընչազուրկ աշխատաւոր մեծամասնութեան միջև — և այդ անդունդից ահա մերթ ընդ մերթ դուրս են ցայտում ահաւոր կայծեր, որ անմիջապէս բոցավառում են և հրդեհում երկիրը։

Եղան ցնցող, արտասովոր տեսարաններ ժողովրդական վերջին յուզումների միջոցին։ Առաջ բերենք մի քանիսի նկարագրութիւնը Corriere della Sera-ից. թղթակիցը Անկոնա է, շարժման սկզբնական օճախում։ Ահա թէ ինչպէս է նա նկարագրում աշխատաւոր ժողովրդի սուգն ու ցասումը.

Մտայ Անկոնա. կայարանը բռնուած է զօրքերով։ Ոչ մի կառք, ոչ մի տրամվայ, ոչ մի սայլակ անգամ։ Շուրջը քար լռութիւն է։ Բոլոր մագազինները ու խանութները փակ. փակ է և փոստն ու հեռագրատունը։ Խանութների ճակատին կարդում եմ. „Փակուած է ի նշան բողոքի՝ պրոլետարական սուգի պատճառով“։ Piazza Roma — ցուցարարների կենտրոնավայրն է. հաւաքուած է ահագին ամբոխ։ Ամենքի ուշադրութիւնը գրաւում է պատերին փակցրուած մի հսկայ մանիֆեստ, որի տակ ստորագրած են „Երիտասարդ բնկերվարականների միութիւն“ և „Ընկերվարական կանանց խումբ“։ Նրա մէջ խօսւում է ընդհարումի ու բազմաթիւ զոհերի մասին և ներկայացւում է դէպքը, որպէս „ոստիկանութեան նախամտածուած ու վայրագ յարձակում“... Մանիֆէստը հրաւիրում է քաղաքացիներին բողոք բառնալ կառավարութեան դէմ և եզրափակում է այս բառերով.

„Տուէք ձեր արցունքը զոհերին և նզովեցէ՛ք կոտորածի հեղինակներին, բայց լաւ յիշեցէք, որ այդ կոտորածի առաջին պատասխանատուն պետութիւնն է, որի բռնութիւնը պէտք է խորտակել բռնութեամբ“։.

Ահա և Բողոքի միթինգ։ Բացօդեայ ամբիոնի շուրջը խմբուած է բազմահազար ամբոխ։ Սկսում են ճառերը։ „Կոտորածը չպիտի թողնենք անպատիժ“ — ձայնում՝ են բոլոր հռետորները, սոցիալիստ, անիշխանական և պարզ հանրապետական։ Մէկը բացականչում է.

— Անօգո՛ւտ է, քաղաքացիներ, բողոքն ու վայնասունը. կօնկրետ մի քայլ պէտք է անենք մենք, եթէ կուզենք վրէժ առնել զոհերի համար. պէտք է անցնենք բարրիկադների վրայ, զինենք ժողովրդին և զինաթափ անենք թշնամուն։

Մի ուրիշը յայտարարում է.

— Ընկերնե՛ր, նախ լիակատար ազատութիւնն է, որ պիտի նուաճենք պրոլետարիատի համար։ Մենք գտնւում ենք մի երկրորդ „Կոմմունայի“ նախօրեակին։

Ապա խօսում է Մ ա լ ա տ ե ս տ ա, հռչակաւոր անիշխանականը.

— Դուք արդարութիւն երբէք չպիտի վայելէք, մինչև որ ձեր ձեռքով չկռէք այդ արդարութիւնը։ Երբ դուք կը պատրաստէք անհրաժեշտ միջոցները և արձիճին արձիճով կը պատասխանէք, այն ժամանակ և կ'ամոքէք ձեր վիշտը, կը պահանջէք կատարեալ ազատութիւն։ Յիշեցէք, որ կոտորածի պատասխանատուները միմիայն բիրտ ոստիկանները չեն. մեծագոյն պատասխանատուները պէտք է փնտրել աւելի բարձր և այնտեղ է, որ պէտք է հարուածել...

Ժողովը վերջանալու վրայ է. Նորէն բեմ է գալիս պարլամենտի անդամ Պիրօլինի.

— Նախ քան ցրուելը, ասում է նա, պէտք է կօնկրետ մի որոշում ընդունել. ի՞նչ կը պահանջէք արդ եօք.

— Ցեղափոխութի՛ւն, գոռում են ամբոխից։

Դարձեալ հնչում է Մալատեստայի ձայնը.

— Ցեղափոխութիւնը կը գայ ինքնին, եթէ դուք պատրաստ գտնւիք և գիտնաք օգտւել առիթէն...

Ահա, վերջապէս, զոհերի յուղարկաւորութիւնը։ Հսկայական բազմութիւն, հարիւրաւոր դրօշակներով, պակազարդ ու ծաղկազարդ դագաղներ, հարազատների լաց ու շիւան... Տեսարանը սրտաշարժ է։ Եւ ի՞նչ ահաւոր մակագրութիւններ պակների վրայ... Մէկի վրայ նկարուած են երեք ռումբ ու մի ատրճանակ և գրուած են այս բառերը.

— „Մարդասպաններին — պրոլետարական վրէժինդրութեան այս խորհրդանշանը“։ Միւսի վրայ կարդում ենք.

— „Անմեղ զոհերի արիւնը պահանջում է գերեզմանից վրէժ առնել դահիճներէն“։

Ահա և մի երկայն ժապաւէն, որ կրում են երկու մանուկներ. վրան գրուած է խոշոր տառերով. — „Իմ թանկագին նշանածին“... Սպանուած բանւորներից մինը, երիտասարդ կաղչչիս, նշանուած էր և մի քանի օրից յետոյ պէտք է ամուսնանար։

Թափորը հանդարտ շարժւում է դէպի հանգստարան։ Տեղի է ունենում մի միջադէպ։ Մօտագայ պատշգամի վրայ կանգնած է մի պարոն, գլխարկով և սիգարը բերանին դիտում է թափորը։ Ժողովուրդը համարելով այդ՝ անվայել մի ցոյց պարոնի կողմից, գոռում է և պահանջում, որ գլխարկը նետէ կամ թէ հեռանայ. ապա երիտասարդ աշխատաւորների մի խումբ գրոհ է տալիս դէպի պատշգամը։ Դիտող պարոնը իսկոյն չքանում է և թափորը շարունակում է իր ընթացքը։ Տեղի է ունենում երկրորդ ցնցող միջադէպը։ Լսւում է յանկարծ ատրճանակի մի պայթոց, ապա երկրորդ, երրորդ, չորրորդը... Եւ սկսւում է մի անկարագրելի խուճապ, կանանց, երեխաների մի սրտապատառ վայնասուն։ Մի քանի

ուշաթափում են։ Պանիկն անցնում է շուտով և թափորը նորէն շարունակում էր ընթացքը։ Չ'իմացանք, թէ ո՞րտեղից կրակեցին և ինչո՞ւ։

Նման տեսարաններ՝ գրեթէ ամեն տեղ։ Մի շարք քաղաքներում տեղի ունեցան բարբիկադային կռիւներ։ Համերաշխութիւնը օրինակելի էր ամբողջ Թերակղզու աշխատաւոր ընդհանրութեան մէջ։ Վերջինը յաճախ գրոհ էր տալիս ոստիկանութեան դէմ, ատրճանակներով զինուած և ինքն ևս հարուածում էր։ Սակայն, բնականաբար, „յաղթանակը" ի վերջոյ դարձեալ տէրերի կողմն է, որոնք ունին իրենց ձեռքում՝ կապիտալիզմի երկու մեծ ուժը—Բանակ և Դրամ...

***

Մենք տակաւին առիթ կունենանք անդրադառնալու այդ կացութեան և նրա յարուցած ուշագրաւ պրոբլեմների վրայ։ Իտալիան, չնայած խօսքի, մամուլի, գու-



Զիպրիանի

մարումների իր ընդարձակ ազատութիւններին, քաղաքական մի Վեզուվ է, մի հսկայ հրաբուխ, որ թերևս վերապահում է ցնցող անակնկալներ՝ նոյնիսկ մոտիկ ապագայի համար։ Սոցիալիզմը այնտեղ ևս սրարշաւ նուաճումներ է անում, սոցիալիզմի հետ և անարխիզմը, ընդհանուր գործադուլի և քաղաքական ու սոցիալական վերիվայրումի գաղափարը։ Այդ գաղափարի կենդանի և հզօր մարմնացումն են երկու մոլեգին յեղափոխականներ, մինը ընկերվարական-սինդիկալիստ, միւսը կարմիր անիշխանական, մինը պարլամենտում, միւսը Անկոնայի մէջ,—Արտուրո Լաբրիոլա և Էրրիկո Մալատեստա։ Այդ վերջինն էր, որ պատրաստեց հակամիլիտարական ցոյցը Անկոնայում և բռնկեցրեց ներկայ հրդեհը։ Երկուսին քաջալերում և շարունակ խթանում է—իր թեւաւոր, հրաբխաշունչ յօդուածներով — հին, մեծանուն գարիբալդեան ռազմիկը, Ամիլկարէ Զիպրիանի, որ տակաւին մնում է իր կամաւոր աքսորի մէջ, Պարիզում, չնայած որ մի քանի անգամ և ճնշող մեծամասնութեամբ պատգամաւոր է ընտրուել իր հայրենիքում։

Լուդվիգ Կոշուտի պէս՝ նա էլ ուխտել է ոտք չդնել հայրենի երկրում, ուր տակաւին կանգուն է իրեն համար առելի միապետութիւնը... Եւ ծերունի ռազմիկը, որ վեռերանն է Եւրոպայի յեղափոխականների, փողհարում է անդադար իր պարիզեան աքսորավայրից դէպի Միլան, Տուրին, Հռոմ, Ջենովա, Նապոլի, բոցավառ կոչերի մէջ յորդորում է ժողովրդին՝ ոտքի կանգնել և թօթափել միապետութեան ու կապիտալիզմի լուծը։ Ամեն մի նոր գործադուլ, ընդհարում ու բարբիկադ աւելի է հրահրում նրա եռանդը, թեւաւորում նրա յոյսերը։ Շա՞տ է, աւա՜ղ, ծերացել Գարիբալդիի թիկնապահը, չի տեսնի նա սոցիալական և նոյնիսկ քաղաքական հանրապետութեան արևը, Կոշուտի եղերական վախճանն է նրան վիճակուած... Զիպրիանիի դիակն է, որ շուտով կը հիւրընկալէ չ'ազատագրուած Հայրենիքը։

Մ. Վ.

ՕՏԱՐ ԿԱՐԾԻՔՆԵՐ „ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՄԱՍԻՆ *)

Պաուլ Ռօրբախ, յայտնի գերման արևելագէտը, որ մի քանի անգամ շրջան է արել Հայաստանի մէջ, հետևեալ յօդուածն է հրատարակել *Deutsch-Afrikanische Korrespondenz*-ի մէջ.

„Թիւրքիոյ և պետութիւնների համաձայնութիւնը ռէֆօրմների վերաբերմամբ՝ ունեցաւ իր նախապատմութիւնը։ Կ. Պոլսի վարիչ շրջանները վերջին վայրկեանին—Եւրոպայի գործակցութիւնը հեռացնելու համար—փորձեցին համաձայնութեան գալ նոյնիսկ հայերի հետ։ Մի կողմից նրանց խոստացան բարելաւել հայոց կացութիւնը, միւս կողմից փորձեցին սպառնալիքներով վախեցնել նրանց. յայտարարեցին, որ եթէ հայերը պնդեն իրենց հիմնական պահանջի վրայ (եւրոպական կօնտրոլի վերաբերմամբ), կարող է պայթել զինուորական ապըստամբութիւն և հայկական ջարդ։

„Անշուշտ, երիտասարդ թիւրքերը հեռու էին իրենց սպառնալիքը իրագործելու մտքից։ Նրանց նպատակն էր միայն սարսափեցնել հայ վարիչ շրջանները և ստիպել նրանց հրաժարուել եւրոպական գործակցութիւնից։ Եւ եթէ անգամ երիտասարդ թիւրքիոյ պատասխանատու մարդիկ իրօք յղանային ջարդի ծրագիր, պէտք է դիտել

*) Տես „Դրօշակ", № 4։

տալ, որ այսօրուան հայերը այլ եւ նախկինները չեն. Նրանք այլ ևս զուրկ չեն պաշտպանելու միջոցներից, ինչպես 1895—96-ին։ Եթէ Թիւրքերը նոր կոտորած սարքէին, մենք հանդիսատես կը լինէինք մի անողոք պատերազմի, կեանքի ու մահուան ճակատամարտի՝ հայ ու Թիւրք տարրերի միջև։ Հարկաւ, հայերը սոսկալիօրէն կը տուժէին, բայց նրանք կը հասցնէին Թիւրքերին անդարմանելի հարուածներ... և հայ ժողովրդի յուսահատ կռիւը կը յարուցանէր անխուսափելիօրէն եւրոպական միջամտութիւն։ Արդէն իսկ հայերի մէջ կայ մի հոսանք, որ համոզուած է, Թէ միմիայն այդ արիւնոտ ճամբու վրայ հնարաւոր է ռէֆորմների իրականացումը։

„Հայ ազգեցիկ անհատները հաւատացած են, որ իրենց դէմ ուղղուած սպառնալիքը գալիս է երիտասարդ Թիւրքերի բանակից։ Հայ արմատական „Դաշնակցութիւն“ կազմակերպութիւնը, որ ամբողջ Արևելքում անուն է հանել իր կորովի և վճռական ընթացքով, անյապաղ պատասխանեց ժէօն-Թիւրքական այդ սպառնալիքներին։ Ունենալով իր արմատները ազգի Թէ մտաւոր շրջաններում և Թէ լայն ժողովրդային խաւերի մէջ, այդ կազմակերպութիւնը կարելի է ընկալել՝ միայն ամբողջ հայ ցեղը բնաջնջելով։ Մինչ Թիւրք „Իթթիհատականները“ կազմում են լոկ օլիգարշիկ մի խմբակ, որ իշխում է զինուորական ոյժով և տարածում է իր իշխանութիւնը գրեթէ միայն մայրաքաղաքի վրայ։ Եթէ հայ յեղափոխական կուսակցութիւնը կոտորէ Իթթիհատի մի շարք պարագլուխները, այդ հանգամանքը կարող է շատ վտանգաւոր կացութիւն ստեղծել ամբողջ Իթթիհատական կազմակերպութեան համար, քանի որ կան հրապարակի վրայ և Իթթիլաֆականները, որոնք ձգտում են վրէժխնդիր լինել 1909-ի և 1913-ի կոխաղանների համար. կան, վերջապէս, և պառաւ Թիւրքերը, որոնք առաջինների հետ կըսպասեն պատեհ վայրկեանի՝ հարուած տալու Երիտասարդ Թիւրքիային։ Թիւրքերի այդ բաժան-բաժան վիճակի հանդէպ՝ հայերն այսօր համեմատաբար միաբան են։

„Բացի այդ, Իթթիհատը միշտ պէտք կունենայ Հայ Ազգային Կուսակցութեան աջակցութեանը, որի շնորհիւ միայն նա կարող է ստեղծել երկրի մէջ մի ընդարձակ կազմակերպութիւն, ներքուստ ամրապինդ և ճիւղաւորուած զանգուածների մէջ։ Հետևաբար, ժէօն-Թիւրքական տեսակէտից իսկ խելացի կը լիներ լուծում տալ ռէֆորմների խնդրին, համաձայնելով հայերի հետ. այդ ռէֆորմների իրագործումը այժմ արդէն դարձած է անխուսափելի։

„Դաշնակցութեան պարագլուխներից մի քանիսը միայն ծանօթ են հասարակութեան։ Մինչ ընդհակառակը, Իթթիհատի բոլոր շէֆերը մայրաքաղաքի մէջ են և ամենքը գիտեն նրանց։ Այնպէս որ, եթէ գիմեն սպանութիւնների, հայերը չեն, այլ երիտասարդ Թիւրքերն են, որ կ'ենթարկուին ամենամեծ վտանգի։ Բաւական է յիշել „Դաշնակցութեան“ կիրառած տակտիկը Կովկասում 1905-ին, ընդդէմ Թիւրք բէկերի, որոնց ռուս կառավարութիւնը գրգռել ու Թափել էր հայերի վրայ։ Այդ տակտիկը նոյնքան ազդու էր, որքան և պարզ. դաշնակցականները կոտորեցին շարժման գլխաւոր դերգիչներին և այդպիսով կանգնեցրին Թաթարական գազանութիւնները։ Նոյն տակտիկը 1909-ին, Թիւրքաց Հայաստանում, Վանայ վիլայէթի մէջ։ Քիւրդ առաջնորդ Եազուպը բռնաբարած լինելով մի հայուհի՝ ենթարկուեց շուտով հայերի յարձակման և ջնջուեց իր ամբողջ խմբով։ Քրդերը սպառնացին վրէժ առնել։ „Դաշնակցութեան“ կոմիտէն իսկոյն պատասխանեց, հրատարակելով անունները բոլոր գազանի քիւրդ պարագլուխների. և սպառնաց բոլորին կոտորել, եթէ մի հատիկ դաշնակցական սպանուի։ Այդ պատասխանի վրայ քրդերը զգաստացան և զսպեցին իրենց Թափը... Արևելքի մէջ մարդիկ վիճում են աւելի զօրաւոր փաստերով, քան Արևմուտքում“

ՊԱՌԻԼ ՌՕՐԲԱԽ

ԹԵՐԹՕՆ

ԻՄ ԲԱՆԴԸ

ՄԱՍՆ Բ.

II

ԱՌԱՋԻՆ ՕՐԸ

Լուսաբաց էր, երևի գրսում արև էլ բարձրացաւ, այդ նկատումով էր մեր փոքրիկ լուսամուտից Թափանցող ցոլքերի գոյնից, բայց մեզ մօտ գրեթէ գիշեր էր դարձեալ։ Եկան լամպը դուրս տարան. մեր զնդանի չորս անկիւններում վերստին խաւարը Թագաւորեց։ Միայն վերում, ուր աւելի հեշտ էր հասնում գրսի աղօտ լոյսը, ես կարողանում էի տեսնել պատերի մոխրագոյն ծեփը և ինչ որ խազեր։ Սարբազ-Խէչօն կռացաւ այդ խազերի վրայ, որ ըստ երևոյթին եղունգներով էին գծուած։

— Քեամբախները բան են գրել, կարդալ չի լինում. ասաց նա պշպշալով։

Մօտեցայ և ես. մեր դժբախտ նախորդների յետին հառաչանքն էր ջանգուած այդտեղ յուսահատների եղունգներով, մահապարտների վերջին սրտապատառ ճիչը, նրանց պարտուած անզօրութեան յաւիտենական աղաղակը, որի մարող արձագանքները տակաւին դողդողում էին այս զարհուրելի զնդանի մութ խորշերում։

„Ինձ տանում են կախաղան, այսօր լուսաբացին“, գրում էր մէկը. յետոյ տարի, ամսաթիւ։

„Մնա՛ս բարի ազատութի՛ւն ու ժողովուրդ՝ հեծեծ ծուռմ էր մի ուրիշը, ինձ կախում են“ դարձեալ հեռուում էր ամսաթիւ ու տարեթիւ։

— Խէչո՛, ասացի, կախաղան բարձրացածների թողած արձանագրութիւններ են, ի՛մ ընկեր։

— Վա՛յ, քեռ՛մբախներ, ապա կարդա՛ բոլորը։

Կարդացի բարձրաձայն. ազնիւ Խէչօի կնճռոտ ճակատը է՛լ աւելի մռայլուեց, քաշ ընկաւ դաժան խոհերի ծանրութիւնից, սովորական անհոգ, ժպտուն սրախօսութիւնը մարեց շրթունքներին, նա յետ յետ գնաց, թիկունքը պատին տուեց ու մնաց լուռ։

Դուռը բացուեց շառաչիւնով. ներս եկա մի ծառայող բանդարկեալ և լռելեայն ցած դրեց յատակին մի աման տաք ջուր. ծառայողը դուրս գնաց. դուռը կրկին փակուեց մեր վրայ։ Իրար նայեցինք, չհասկանալով այս տաք ջրի նշանակութիւնը։

— Քեռ՛մբախներ, չայի ջուր են բերել, երբ ո՛չ շաքար ունինք, ո՛չ չայ։

Եւ արդարև դա մի կատարեալ հեգնութիւն էր. ո՛չ բաժակ ունէինք, ո՛չ թէյ, ո՛չ շաքար ու մեզ եռացած ջուր էին բերել ըստ բանդային կանոնագրութեան

Վերստին շարուեցինք պատերի տակ, քաղցած, գազազած ու անքնութիւնից տանջուած, գողդոջուն մարմիններով. հաճոյքով ու ցաստմով էինք նայում ախորժ գալորշի արձակող այս տաք ջրի ամանին, որ կարող էր մեզ մի փոքր կազդուրել դաժան գիշերուայ տանջանքներից յետոյ, բայց ի՜նչպէս...

Ո՛չ թէյ, ո՛չ շաքար։

Ի՜նչ միտք ունէր բանդի այս արտառոց խնամքը, մեր ախորժակնե՞րը գրգռելու, մեզ է՛լ աւելի տանջելու համար արդեօք։ Ի՜նչ վատ հեգնութիւն մեր ցաւոտ վիճակի...

—Քեռամբախ ռուսի խելք է, առանց չայ ու շաքարի տա՞ք ջուր։

— Չէ՛, Խէչօ, բանդային կանոն է, առաւօտները թէյի ջուր տալ բանդարկեալներին։

— Բա որ չայ ու շաքար չկա՞յ...

— Բանդի կանոն է։

— Քեռամբախ մնայ կանոնը, ասում եմ ռուսի խելք էհ լւից էլ նավօդկի կ՛ուզեն, իսկ մեզ տաք ջուր են տուել առանց չայ շաքարի։

Ու մեր անզօրութեան մէջ քրքջացինք։

Էլի մեր Սարբազ-Խէչօն տրամադրութիւններս կարողանում էր բարձր պահել։

Դուռը կրկին շառաչիւնով բացուեց.

— Ոաքի՛, լսեց մեր վերակացուի բիրտ, խռպոտ ձայնը։

Ներս մտաւ բանդապետի առաջին օգնականը, այն մարդակերպ հրէշը, որ երեկոյեան մեզ բանդային տարազ հագցրեց, որի դէմքի վրայ այնքան ժարդ ու գարշ վատութիւն կար։

— Մէկ, երկու, երեք, չորս, համարեց նա մեզ, մատիտով նշանակեց թղթի վրայ, ապա դարձաւ Սարբազ-Խէչօին։

— Ինչո՞ւ են ոտներդ շղթայած։

— Զգիտեմ, Եկատերինոդարից ճամբայ դնելիս, շղթայեցին ինձ և ընկերներիս։

— Ընկերներդ ո՞ւր են։

— Զգիտեմ գիշերն ուր տեղաւորեցին։ Կը խնդրեի պ. օգնական, հանել տալ այս շղթաները։

— Լաւ, կը հանեն, չես մեռնի։

Խէչօն լռեց։

Օգնականը պատրաստուում էր դուրս գալ, երբ ես առաջացայ։

— Պ. օգնական, ասացի, սա՝ ինչպէ՛ս գիտէք մահապարտների զնդան է, ուր մենք նետուած ենք քաղցած, առանց ծածկոյթի, առանց որևէ տեղաշորի, անգամ մի կտոր տախտակ չկայ, որի վրայ նստենք։ Որչափ մեզ յայտնի է, մենք տակաւին ո՛չ դատուած ենք և ոչ դատապարտուած. ուզում ենք յուսալ, որ մահուան պատիժ չի սպասում մեզ, եթէ մինչև իսկ դատապարտուենք. խնդրում ենք ասել՝ իմանալ, ինչո՞ւ ենք մահապարտների զնդանում և այս անհանդուրժելի վիճակում։

Օգնականը լսեց այս բոլորը ակնայտ սրտնեղութիւնով, ատամներն իրար վրայ սղմած, նայեց ինձ ոտքից գլուխ մի վատ, թունոտ հայեացքով, ապա դուրս գնաց, թողնելով առանց պատասխանի։

Դուռը կրկին փակուեց։

— Լա՛ւ ասիր, վրայ բերեց Խէչօն, ամա էս անիծուածներին որ արդար բան ես ասում, ինչպէս հօրը հայհոյես. քեռամբա՞խ նավօդկիներ։

Վերստին քրքիջ բարձրացրինք, որին անմիջապէս յաջորդեց ծանր լռութիւնը։ Խօսելիք չկար. դրութիւններս դառնում էր անհանդուրժելի։ Ինձ պահում էր մի յոյս, որ հաստատուած էր պարզ տրամաբանութեան վրայ. մեզ հետ կատարուածը այնքան արտառոց, այնպէս հրէշաւոր էր ու անմիտ, որ ինձ թուում էր անհնարին այս դրութեան յարատևումը։ Ինչքան և վատ կարծիք ունենայի ռուսական բանդային կարգերի մասին, պնդնարին էր թուում ինձ այս ասահճան գռեհկօրէն վրան բաց անիրաւութիւնը, այս տմարդի բարբարոսութիւնը դէպի բանտարկեալները, որոնք դատապարտուած չեն, որոնք մի երկու ամիս յետոյ՝ կարող են արդարանալ անգամ ռուսական մեր օրերի ծամածռուած օրէնքներով։

Այսպէս էի մտածում ու ականջս ձայնի էր, թէ ահա՝ ուր որ է՝ դուռը նորից կը բացուի, մեզ կը հրաւիրեն դուրս այս գարշահոտ խցից և այլ տեղ կ՛առաջնորդեն, գէթ ծածկոց ու որևէ սնունդ կը տան քաղցից ու ցրտից չմեռնելու համար։

Նախասենեակում անց ու դարձ էր անում միայն մեր վերակացուն. նրա վառ աչքն էր փայլում մեր դրան ապակեծածկ անցքի վրայ։ Ի՞նչպէս, ո՞ւմից իմանալ, թէ ո՞ւր են, ի՞նչ եղան մեր միւս ընկերները, ո՞վ է արդեօք մեր հարևան զնդանում և միւսներում, որոնք բոլորն էլ բացւում են մի ընդհանուր նախասենեակի վրայ։

Քիչ յետոյ, սակայն, նախասենեակում ոտնաձայները շատացան ու խեղդած զրոյց լսւեց հայերէն։ Թռանք դէպի դրան անցքը։ Այո՛, նրանք էին, չորս հոգի մեր ընկերներից — Ց. Արզ., Մ. Նալբ., Լ. Մուշ., Հ. Սող., որոնք դուրս գնացին վերակացուի բիրտ հրամանների տակ։ Սա առաջին սփոփիչ յայտնութիւնը եղաւ մեզ համար գիշերուանից սկսեալ, շատ չնչին փաստ անշուշտ—քանի որ խօսակցել, լուր տալ շատ դժուար էր, բայց էլի սրտապնդիչ մի բան կար այն գիտակցութեան մէջ՝ թէ մեր հարևան զնդանում մեր մտերիմ ընկերներն են։

Դրանը կպած մնացինք, մինչև որ նրանք յետ եկան դրսից և չնայելով վերակացուի բոլոր զգուշութեան ու խստութեան բարձրաձայն հաղորդեցինք, թէ ո՞վքեր են իրենց հարևան։ Յայտնեցինք նաև, որ քաղցած ենք։ Նրանք ասացին, որ հաց ու պանիր ունին և պիտի աշխատեն մեզ էլ բաժին հասցնել վերակացուի միջոցով։

Լուրը շատ լաւ էր. մեր զնդանում նոյնիսկ ցնծութիւն տիրեց։ Քիչ յետոյ մեր դուռը նորից բացւեց. այս անգամ դուրս գալու հերթը մեզն էր։

— Ցասնեհինգ րոպէ ունիք ձեր բնական պէտքի և զբօսանքի համար, չոր ու անաղորմ շեշտով ասաց վերակացուն։

Քսանհինգ ժամում տասնհինգ րոպէ միայն օդի մէջ... Ճար չկար, պէտք էր համակերպւիլ։ Դուրս եկանք աշխատելով այդ կարճ ժամանակում որքան կարելի է շատ շարժումներ կատարել, ցատկել, վազել, սարմնամարզ անել։ Ցարաբախտաբար այդ էլ էր արգելւած, մենք պարտաւորւեցինք ուղտերի շարանով իրար յետևից պտոյտներ գործել ու միանգամայն լուռ։

Այս էր կոչւում զբօսանք Նովոչերկասկի բանդում։

Բակում ոչ ոք չկար. այդ դժոխք բակը, որ գիշերը դիտել չէինք կարողացել։ Բանդը գանւում էր մի բլրի զառիվայր լանջին։ Մեր զնդանը զառիվայրի հէնց կատարին էր։ Մեզնից վեր երևում էր բլրի կատարը, ուր անց ու դարձ էին անում ազատ մարդիկ։ Այնտեղ պիտի կարողանայինք ճանաչել մեր բարեկամ ազգականներին, եթէ երևային։ Նշան անել, խօսել սակայն թւում էր անհնարին։ Մեր իւրաքանչիւր շարժումին հետևում էին վերակացուները։

Մեր զնդանից վար՝ դէպի մուտքի դուռը, զառիվայր բակի այս ու այն կողմ անկարգ ու անսիստեմ շաւած էին այլ շինութիւններ, ամենքն էլ լեցուն բանդարկեալներով, որովհետև ամենքի առաջ հսկում էին հրացանաւոր կօզակներ։ Մի հրացանաւոր վերակացու հսկում էր արտաքնոցը, ուր ուշացողը սովորաբար ենթարկւում էր ամենատեսակ կոպտութեան։ Հրացանի կոթը յաճախ էր իջնում փորացաւով տառապող հիւանդների թիկունքին բնական պէտքերի ընթացքում։ Բակի աջ ու ձախ կողմերում բարձրանում էին երկու բրգաձև և առանց լուսամուտի շէնքեր — դրանցից մէկը պահեստ էր մեր զգեստների, միւսը՝ խոնաւ ու խաւար կարցերն էր, ուր նետւում էին ամենաչնչին անհնազանդութեան համար բանդարկեալները օրերով միայն հաց ու ջրով և միանգամայն զուրկ որևէ ծածկոցից, խոնաւ գետնի վրայ։

Բոլորովին վարում՝ մուտքի մօտ բարձրանում էր բանդի եկեղեցին և նրանից աջ ու ձախ ինչ որ արհեստանոցներ, ուր աշխատում էին տաժանակիր աշխատանքի դատապարտւածները։

Ու հեռուն հարթավայրն էր ձգւում, ռուսական ծովածաւալ տեպները, համր ու մռայլ, ինչպէս ռուս ոգին։ Ցեղ տեղ երևում էին գիւղեր, հատ-հատ խրճիթներ ծուխ էին արձակում. երևում էին հողմաղացներ, թևերը երկնքի առաջ բացած ազօթողի կեցուածքով, մի մուժիկ քշում էր իր միաձի սայլակը աշնան դեղին դաշտերի միջով, մի խումբ կանայք ու տղամարդիկ հանդարտ գնում էին դէպի բաց հեռուն, ասես աննպատակ, այնպէս ինչպէս միայն ռուս մարդը գիտէ գնալ։

Բանդին բոլորովին մօտիկ երկաթուղու գիծն էր անցնում. ահա և գնացքը. շոգեմեքենան թռաւ փնչալով և նրա յետևից վագոններ, լեցուն ճամբորդներով, որոնք գլուխները լուսամուտներից հանած՝ նայում էին բանդին։ Եւ այդ բոլորը թւում է անհասանելի երազ։ Ու յետոյ՝ վիրաւորական ասեմ, թէ՞ թշնամական մի բան կայ անազատ կեանքում տառապողի համար, կեանքի այդ անհոգ եռ ու զեռի մէջ։ Վիրաւորանք է թւում, որ աշխարհը դեռ կարող է իր սովորական ամենօրեայ հոգսերին անձնատուր լինել, երբ ինքդ այդքան դժբախտ ես, այդքան մոռացւած։ Այդ վիրաւորանքի զգացմունքը երբեմն այնքան կիզիչ է դառնում, որ քիչ է մնում մարդ ճչայ. «Հէ՛յ, անզգաներ, այստեղ զարհուրանքնե՛ ձեր աչքի առաջ և դուք դեռ կարողանում էք ապրել»։

Ճչա, որչափ կ'ուզես, գնացքն անցաւ շառաչիւնով, ճամբորդների գլուխները ծածկւեցին. ու մնացին դարձեալ ռուսական խոհուն, հնազանդ տեպները և այս գլխիկոր, մռայլ մուժիկները, որ գնում են, գնում են մոլար դաշտերով ու չգիտես ո՞ւր...

Գնացքն անցաւ թողնելով մութ ցաւ՞ ասեմ թէ տարեւութեան զգացմունք մեր հոգում, և սակայն՝ այնպէս կ'ուզէինք, որ էլի գային նորանոր գնացքներ, էլի անցնէին շչչելով, մարդիկ սլանային թեկուզ անտարբեր դէպի մեր տառապանքը. չէ՞ դա դարձեալ ազատ կեանքի մի

կտորն էր, մի երազ մեզ համար, թէկուզ անհասանելի։

Ակնապիշ սպասում էինք նոր գնացքի, ծխի նոր ղրրան էինք փնտրում ու հայեացքներս կորչում էր հեռու ստէպներում, ուր մուժիկներն էին քայլում։

— Սմիրնո՛ *), լսեց յանկարծ մուտքի առաջից, բոլոր վերակացուները բակի զանազան մասերում կրկնեցին նոյն սաստը, որպէս արձագանքներ։ Դա նշան էր, թէ մեծաւորն է գալիս, գլխարկները պէտք է հաներ։ Ներս մտաւ բակը մի ծերունի, միջահասակ, գիրուկ, ածիլած դէմքով, կապոյտ, խորամանկ ու նենգ աչքերով, հայեացքը ոտքերի առաջ, բայց իրօք շուրջը նայելիս գող կատուի պէս։ Եւ մինչդեռ բակի այս ու այն կողմում ցրուած բանդարկեալները գլխարկները հանած՝ սպասում էին, ռուսական բանդի արժանի գլխաւորը, թեքւեց մուտքի կողքի անկիւնը, յատուկ շինած տեղում և ամենայն հանդարտութեամբ սկսեց միզել։ Եւ բանդարկեալները, որոնք այդ վայրկեանին անցնում էին այդ անպատկառ ծերունու յետևից, այնուամենայնիւ հանում էին գլխարկները յարգանք տալու ռուսական միզող իշխանութեան այս արժանի ներկայացուցչին։ Եւ ո՛չ մէկը այդ ռուս հօտի մէջ, որ ըմբոստանար այդ աստիճան յանդուգն, անպատկառ ստորացումի, այդ անասելի վիրաւորանքի դէմ։

Ռուսական ոգու անհուն հնազանդութեան, նրա ապշեցուցիչ սարկամտութեան, անծայր համբերութեան չափը տեսնելու համար՝ պէտք է լինել ռուսական բանդերում, դիտել ռուս բանդարկեալի կրած ամենօրեայ անարգանքները, պատիժները, զրկանքները, ծեծը և այլ անասելի վիրաւորանքները։ Անկասկած՝ ամենից դժուարինը, ամենից տրագիկականը բանդային ըմբոստութիւններն են, որոնք գրեթէ միշտ վերջանում են միանգամայն անմեղ բանտարկեալների կոտորածով, բայց ըմբոստ ոգին, արդար ու բուռն զայրոյթի ընդունակ խառնուածքը անկարող է հաշուի առնել հետևանքները իր գործողութեան։ Եւ այդ բողոքող, ցասումից դողդողացող խառնուածքն է, այդ կատաղի ու արդար խիզախումը վտանգի, որ պակասում է այդ համբերատար, այդ ծով ժողովրդին, այս արտասովոր թերութիւնն է կարելի դարձնում, որ մի զզուելի ճիճու, ինչպէս այս ծերուկ բանդապետը — լրբօրէն միզի մարդկային արժանիքի վրայ։ Ցետոյ իմացանք, որ դա բանդապետի ամենօրեայ սովորութիւնն է տարիների ընթացքում և դեռ ո՛չ մի ռուս բանդարկեալ չի համարձակւել բնական պէտքը հոգացող լպիրշ բանդապետի յետևին պահանջած յարգանքը մերժել և գլխարկ չհաներ։

Այս խոհերը դառնում էին գլխովս մեր զբօսանքի ժամին. ես այլ ևս անուշադիր էի դէպի բանդի բակում անցած դարձածը, բայլում էի գլուխս քաշ ու ընկճուած՝ երբ առջևիցս գնացող ընկերս Իս... կամացուկ ասաց.

— Իս բլրի վրայ նկատում եմ եղբօրս. նայիր չե՞ս գտնում, որ նա է։

Նայեցի անմտօրէն, թէև եղբօրը չէի ճանաչում։

— Կը փորձեմ ձեռքի նշանով հասկացնել, որ մենք դրամ չունինք, ասաց դարձեալ Իս...ը։

— Փորձի՛ր, իսկ ես կը հսկեմ վերակացուի շարժ ու ձևին։

Եւ իմ խեղճ ընկերը աջ ձեռքը զգուշութեամբ բարձրացրեց մինչև գօտին, բթամատը զգուշութեամբ քսեց ցուցամատին՝ յուսալով թէ բլրի կատարից դիտող եղբայրը կը հասկանայ՝ թէ մենք փող չունինք։

Դիծաղս չկարողացայ պահել ընկերոջս այդ օրինակ միամիտ փորձի վրայ ու փրթկացի։

Վերակացուն ուշադրութիւնը կրկնապատկեց, փորձելով հասկանալ յանկարծական ծիծաղիս պատճառը, ապա իր ժամացոյցին նայելով՝ պատւիրեց ներս գնալ։ Քառորդ ժամն անցել էր, ուրեմն դարձեալ քսանևչորս ժամ պիտի փակւէինք մեր գարշահոտ բնում։

Ներս մտանք, վերստին կծկւեցինք պատերի տակ։ Քայլելու, շարժւելու պահանջ շատ չկար, քաղցած էինք ուժասպառ։ Կարդացել էի սակայն Լավրովի գիրքը շարժման անհրաժեշտութեան մասին բանդում, ուստի մինչ ընկերներս կուճռւռել էին պատերի տակ, ես փորձեցի պատներ գործել մեր բնում. բայց տեղն այնքան փոքր էր, որ շուտով գլուխս դարձաւ ու ես էլ տեղ բռնեցի մի պատի տակ։ Ու խորհում էինք, թէ ինչպէս, ի՞նչ միջոցով լուր տանք դուրս, որ մեզ մի փոքր փող հասցնեն։ Մտածածներս մէկը միւսից անգործնական, յաճախ նոյնիսկ ծիծաղելի էին։ Եւ ընդհանուր շաբուսի մէջ յանկարծ Իս...ը ձեռք առաւ մեր մի հատիկ սրբիչը, թեղ, ասեղ, որ թողել էին մեզ և սկսեց ինչ որ ասեղնագործել։

— Ի՞նչ ես անում։

— Սո՛ւս կացէք, տղե՛րք, գտել եմ հնարը, պատասխանեց Իս...ը խնդագին։

— Ի՞նչ հնար։

— Փողի հնարը. ահա սրբիչի վրայ կ'ասեղնագործեմ՝ „Իս. փող չ'ունեմեան“. յետոյ, դուրս կը տամ եղբօրս, իբր թէ լւանալու ու նա կը հասկանայ. վերակացուները գլխի չեն ընկնի, թէ ինչ է գրած, նրանք կը կարծեն՝ թէ դա իմ ազգանունն է։

— Այդ լաւ է, ասացի ես կատակով, բայց պէտք է հասկացնել նաև, որ փողը յանձնելու է բանդային գրասենեակը։

— Շատ լաւ, ուրեմն կ'ասեղնագործեմ „Իս. փող չ'ունեմ աւէք կենտրեան“։

— Ափերի՛մ, խելքիդ մատաղ. քեամբախ ռուսի խելքը

*) Հանդա՛ր։

իսկի չի կարի, էդ նավթդկի չի, որ շուտ հասկանայ, բացականչեց Խէշօն։

Ընդհանուր ծիծաղ բարձրացաւ. սկսեցին հարիւր ձևով հոլովել Իս...ի հնարամտութիւնը և խեղճ աղան կոտրւեց ու թել ասեղը վար դրեց։

Գոհ էինք, որ կուշտ կուշտ ծիծաղեցինք և դեռ էլի օրեր շաբաթներ պիտի ծիծաղէինք Իս...ի այդ անճար հնարամտութեան վրայ։

Խենթ ծիծաղին յաջորդեց դարձեալ անծայր լքումը. քաղցած էինք...

Դուռը վերջապէս նորից բացւեց. յայտնւեց դաժան վերակացուն, այս անգամ խնդադէմ ու բացականչեց.

— Ահա ձեր ճաշը։

Եւ մի սպասաւոր բանդարկեալ յատակի վրայ դրեց թիթեղէ մի աման լի տաք կերակրով, մի սև հաց և չորս հատ փայտէ գդալ։ Երբ դուրս գնացին վերակացուն ու սպասաւորը—մենք վրայ պրծանք մեր ճաշին ագահօրէն, բայց զզւանքի մի ուժեղ զգացմունք բոլորիս էլ յետ մղեց։ Ամանի տաք հեղուկից փչում էր ծանր գարշահոտութիւն. տեսքը նման էր փողոցի ցեխախառն անձրևաջրի. երբ գդալով խառնում էինք, միջից դուրս էին գալիս անասունների աղտոտ փորոտիք, կաշու մազոտ կտորներ, ականջի մի մասը և ինչ որ թելեր, որոնք երևի ճացորդներն էին հոտած կաղամբի։ Ոչ թէ ուտել, այլ նոյնիսկ մօտենալ այդ զզւելի հեղուկին անկարելի էր թւում, այն աստիճան վանիչ էր նրա թանձր, տաք հոտը։ Խառնում էինք մեր դգալներով ու մեր դժբախտութեան մէջ քրքջում, երբ մէկն ու մէկը մեզնից յաջողեցնում էր հեղուկի տակից դուրս հանել մի անորոշ պատառ, որի ինչ լինելը անկարելի էր լինում որոշել։ Շատ ուշ իմացանք, որ այդ „կերակուրը“ մեր բանդապետի հանճարեղ մտածումի արդիւնք է, որ շատ ուժան է նստում Մսագործներից հաւաքում են մորթւած կենդանիների գլուխները ու փորոտիքը և ամբարում բանդի մի խորշում, ձեռք են բերում նաև թթու դրած, հոտած կաղամբ։ Ամեն օր այդ գլուխներից մի քանիսը փշրում են ու աղտոտ, մազով, կաշիով ձգում կթսան. վրան աւելացնում են նաև կենդանիների փորոտիքի անմաքուր կտորներ, նաև մի փոքր կաղամբ, այս բոլորը եռացնում են ջրի մէջ և ահա բանտարկեալների „ճաշը“ պատրաստ է։ Սրանով են կերակրւում մօտ ութ հարիւր հոգի, իսկ տնտեսած դրամը գնում է բանդապետի գրպանը։

Հացը՝ թէ իր արտաքինով և թէ համով ոչնչով յետ չէր մնում այս սուպից. սև աթարի մի կտորի էր նման այդ հացը, որի մէջ հողն ու աւազը այնքան առատ էր, որ կարծես փողոցի թանձր ցեխը շաղախւել էին, զանգել, արևի տակ չորացել յատկապէս բանտարկեալներին ուտացնելու համար։ Չորս փայտէ գդալներն էլ լրացնում էին պատկերը — տարիներ շարունակ բերանից բերան անցած, կրծոտւած, քերւած այդ դժբախտ փայտէ կտորները ոչ միայն վանիչ էին իրենց տեսքով, այլ նոյնիսկ գործածութեան անպէտք։

Այսպէս էր մեր ճաշը՝ որին առաւօտից անձկութեամբ սպասում էինք։

Այս կամացուկ յետ քաշւեցի, պոկեցի հացի երեսից մի կտոր, մի փոքր աղ ցանեցի վրան և փորձեցի ծամել ինչպէս կարող էի։ Միւս երկու ընկերներս դեռ նայում էին ամանին շւարած և վարանման մէջ էին, ուտե՞լ, թէ՞ չ՝ուտել — քաղցի ու զզւանքի զգացմունքը հաւասարապէս զօրեղ՝ պայքարում էին խեղճերի ներսում։ Վճռական քայլն արեց մեր չորրորդ ընկերը՝ հոգեկան հիւանդ Մեդ...ը, որ գդալը ձեռք առաւ և սկսեց այդ թանձր գարշահոտ հեղուկի միջից կաշի և մսի կտորներ որսալ և ուտել։ Միւս երկուսը ճարերը կտրած հետևեցին նրա օրինակին և շուտով երեք գդալները իրար ընդհարւելով, յուզում էին այս կասկածելի հեղուկը մսի ու փորոտիքի յետին կտորները փնտրելով։

Այսպէս վերջացաւ մեր ճաշը։

Աշնանային կարճ օր էր, շուտով մթնեց։ Սպասաւորը եկաւ կերակրի պարագաները տարաւ և լամպը վառեց։ Մի՞թէ և այս գիշեր մենք պիտի մնանք այս խոնաւ յատակին, առանց ծածկոյթի, մտածում էինք մենք երկիւղով։ Երեկոյ էր արդէն, երբ նախասենեակում բազմաթիւ ոտնաձայներ լսւեցին. դուռը բացւեց ոչ սովորական շառաչիւնով, այլ կատաղութեամբ ու մեր փոքրիկ զնդանը ներս թափւեցին բարբարոս վայրագութեամբ հինգ-վեց վերակացուներ ու բանդապետի օգնականը։

— Ոտքի՛ որոտաց մեր վերակացուն, խուզարկութիւն է, ձեռքերդ վե՛ր։

Ոտքի ելանք ու բազուկները բարձրացրինք։ Սկսւեց անպատկառութեան ու անարգանքի օրգիան։ Վերստին՝ ինչպէս առաւօտեան՝ ջարդելու չափ տրորեցին մեր կողերը, քանդեցին բոլոր կօճակները, կարերի արանքը խուզարկեցին, ապա երկաթէ բիրերով հարւածեցին յատակն ու պատերը։

— Դուրս եկէք. վերցրէք ձեր անկողինները, պատւիրեց օգնականը։

Դախասենեակ դուրս եկանք և ներս քաշեցինք... մի մի խոտէ դշակ, խոտով լցրած մի բարձ և մի ծածկոց։ Այս էլ մի բան էր—գէթ խոնաւ յատակից ազատւում էինք, թէկուզ կոշտ խոտով և վրաներս մի բան ձգելու հնար ունէինք։

Այսպէս մթնեց մեր առաջին դժոխք օրը Դօվշերկասկի նզովւած բանդում։

ՏԱՐԱԳԻՐ

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՏՕՆ

„Դրօշակ"ի խմբագրութիւնը հետևեալ նամակն ստացաւ Ֆրանսիայի Ընկերվարական Կուսակցութեան Կենտրոնից.

Սիրելի քաղաքացի,

Ֆրանսիայի Ընկերվ. Կուսակցութիւնը պիտի գումարէ իր համազգային կոնգրէն յուլիս 13, 14, 15 և 16-ին, որ պիտի լինի նախապատրաստական մի ժողով Վիեննայի Միջազգային Կոնգրէի համար։

Նախ քան համագումարը, յուլիս 12-ին տեղի կունենայ Պարիզի շրջակայ դաշտերի մէջ մեծ հանդէս՝ տօնելու համար այն յաղթանակը, որ մենք տարանք վերջին ընդհանուր օրէնսդրական ընտրութիւններին։ Պիտի մասնակցին այդ հանդէսին մեր 101 ընտրեալ երեսփոխանները և յուսով ենք ամբողջ աշխատաւոր դասակարգը պիտի աջակցէ մեզ՝ արժանաւոր կերպով շեշտելու Սոցիալիզմի յարաճուն ոյժը մեր երկրում։

Մենք չափազանց ուրախ կը լինէինք, եթէ Ձեր կուսակցութիւնը բարեհաճէր իր ներկայացուցիչը ղրկել մեզ այդ առիթով կատարուելիք հանդէսին խօսք առնելու համար։

Եղբայրական ողջուններով

ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ՝

ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՆԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Թիւրօն ստացած է՝

Մարսէյի Ցառաջ խմբ. ամսավճ. 55, 65, 66: Դումար 186 ֆրանկ: Նոյն խմբի հանգանակութիւնից ի նպաստ Երկրի իմնիապ.՝ Դ. Յ. 50 ֆրանկ, Ս. Զ. 40, Դ. Դ. 20, Սերժ 50, Լ. Տ. 50, Մ. Ս. 20, Մ. Հ. 20, Լ. Թ. 15, Ս. Ե. 10, Յ. Ա. 5: Ցառաջ խմբի անդամներից 240 ֆր.: Դումար 706 ֆրանկ:

Ա ւ ա զ ա ն ի Կ. Կոմիտէ՝ 150 մր., Փ ա ր ի զ ի Եկեղեցական. ամսավճ. 50 ֆր., Գէորգ Յովհաննիսեանից 45 ֆր.:

Շ ա հ ն ա զ ա ն ի Քրիստափոր խմբ. 1150, Գ ի լ ա ն Կոմ. 1170 դրամ:

Շահնազ. Կ. Կ.-ի միջոցով ի նպաստ կովկասահայ բանտարկեալների հանգանակած Ախմէքայում՝ 403, 60 ֆր.:

Վիեննայի Կենտր. Կոմիտէն՝

(Հանգանակութիւն 1912—1913)

Կ ա յ ա ր ա ն ի կազմին միջոցով. — Նուիրատուներն են՝ Վ. Քէրէս. 120 դրամ, Մ. Փ. 40, Արս. Զիլինկ. 20, Պետր. Պոյան. 10, Լեւոն Փափազ. 40, Մարս. Մուքամ. 40, Նշան Կ. 20, Հն. Վ. Պարտիզ. 108, Համբ. Դր. 40, Համ. Սուք. 10, Հրանդ Յովսեփ. 20, Ե. Էրմէք. 45, Թ. Մուք 20, Մ. Մուք. 20, Տօքթ. Ա. Թ. 30, Յակոբ Իւբիւն. 20, Արմ. Իւբիւն. 40, Վ. Յուլ. 40, Լեւ. Յ.-ի ձեռքով 50, Վ. Մեռաս. 10, Համ. Բ 10, Մ. Ս.-ի ձեռքով 16, Թ. Բ. 10, Յակ. Եալ 20, Եր. Հայկ. 10, Լ. Յով. ձեռամբ 10: Դումար 819 դրամ:

Ս ա ր-Զ ո ր ի կազմին միջոցով. — Նուիրատուներն են՝ Գ. Փ. 10 դրամ., Պ. Խ. 5, Լ. Զ. 20, Պ. Վ. 2 եւ կէս, Ի. Փ. 20, Ռ. Թ. 20, Ս. Զ 5, Մ. Թ. 20, Թ. Ի. 5, Յ. Խ 5, Ե. Ի. 5, Ս. Փ. 1, Ս. Ա. 5, Մ. Ս. 5, Յ. Մ. 20, Գ Մ. 2, Մ. Ա. 10, Ե. Բ. 5, Մ. Փ. 5, Վ. Ա. 5, Գ. Զ 5, Մ. Դ. Գ. 5, Ա. Մ. 10, Ն. Ա. 108, Վ. Մ. 20, Կ Խ. 108, Ա. Մ. 10, Պ. Ա. 10, Տ. Տ. 108, Հ. Զ. 5, Կ. Շ. 20, Բ. Մ. 5, Ժ. 2 եւ կէս, Պ. Ժ. 10, Տ. Ա. 5. Գ. Թ. 10, Ա. Մ 10, Յ. Պ. 10, Ռմն 10, Ընկերներէ 618: Դումար 1265 դրամ.

Ռ ո ց ի կազմին միջոցով. — Նուիրատու համակրողներն են՝ Անք. Մար. 10 դրամ., Պողոս Պ. 10, Թագ. Պ. 30, Արամ Օգ. 10, Ս. Մ Սարգ. 108, Մ. Մամ 20, Գր. Ս. 20, Ս Զաղ 40, Մ. Պամ. 40, Գառ. Գան. 20, ընկերներէ՝ Ց. Կ. 100, Օն. Փ. 40, Դ. Պող. 108, Մել. Թուղ. 40, Կրպ. Տօլմն. 40, Կր. Պապ. 10, Ս. Պապ. 10, Վ. Տր. 20, Հր. Մարս. 216, Ան. Տաս. 20, Ան. Բ. 54: Դումար 966 դրամ:

Դ. Դ ի ւ ղ ի կազմին միջոցով.—Ռմն 10, Ռմն 20: Դումար 30 դրամ.

Մ. Դ ի ւ ղ ի կազմին միջոցով.—Պատրիկէ 20 դրամ., Արամ-Արտաշիր 20, Հրաչ Ս. 5, Խ. 10, Ռմն 90, Հ. Տ. 5, Գեղջուկ 5: Դումար 165 դրամ.

Դ ա ց տ ա զ ե տ ի ն ի կազմին միջոցով. (Տ. Զ. Ճ.) Լ. Տիր., Գ. Տիր., Մ. Գալ., Յակ. Ազ., Ալէք. Տիր., Յակ. Կղմ., Վաղ. Գալ., Պետ. Լոր., Յար. Ազաս., Ռմն, Խ. Գր., Գր. Տիրատ. Ռիկ. Թ. Հ., Վ. Հ., Յարութ., Ղ. Տիր., Մ. Տիր., Յովհ. Զ., Սեդր. Բ., Նազ. Միհ., Տ. Ե. Բ. Մ., Ռ. Քէշիշ, Ստ. Կղմ., Տ. Ե. Բ., Մկր. Ազ., Խ. Տ. Գր., Տիգր. Գալ. 10-ական դրամ., Հայկ Տ., Աւետ. Ազաս., Պետ. Ն, Եր. Նիկ., Հմ. Նիկ., Տօքթ. Լ. Գաս., Տօքթ. Մ. Տ., 20-ական, Լ. Փ. 7, Զարեհ, Նշ. Նշ., Յովհ Պ., Ստ. Աչ., Զ. Նէմց., Թ. Հայր., Ռմն, Հայկ.Փ., Պ. Աքան., 5-ական: Դումար 462 դրամ.:

Ք ի ր մ ա ն ի կազմին միջոցով. — Նուիրատուներն են՝ Յար. Սալ., Յար. Ա., Աբ. Աւ., Օ. Տ., Մ. Զա., Թ Գ, Յար. Ալ., Բ Զ., Եր. Հ., Կ. Երէց., Ց. Ա., Օ. Ման. Թ. Ահն., Կ. Ֆէսն., Յակ. Բ, Զար. Ման., Յակ. Ա., Մ. Բարս, Լ. Ճենկ., Մկր. Թանմ., Խ. Էրմէք. Մեծ. Աւ., Ասս. Կիր. 10-ական դրամ., Ան. Ա. 20, Բ. Բէք. 20: Դումար 270 դրամ:

Հ ի ն մ ա ղ ա ֆ ի կազմին միջոցով. — Նուիրատուներն են՝ Միրզա, Կրպ-ի որդի Ն., Ֆար, Է. Վ. Ակին., Մինր, Փոսպ, Թադ., Միքայէլ 20-ական դրամ., Կր. Սին. 27, Քիւրմ, Կայծակ. Մանուկ, Ալօս, Շանթ, Բաճքի. Վրէժ, Թանմիզ, Միմ, Օր Ման, Ռմն, Յակ. Սարայ, Իմ. Գոյում, Լ. Օհան., Կղմ. Զ., Պետ Սա, Մ. Մէնէվ., Բ. Զ. Թ., Ալմ. Բ., Օր, Մառի 10-ական, Գ. Հան., Տիգր. Շ., Ս. Գար., Յակ Թիմ., Ան. Պալ. 5-ական: Դումար 412 դրամ:

Ռ ի մ պ ո ս ի կազմին միջոցով. — Նուիրատուներն են՝ Ղեւոնդ 108 դրամ., Ղեւոնդ 54, Յ. Փիլ. 25, Վարդգէս, Արմէն, Վարդարշակ, Որսորդ, Պարոյր, Պ. Սերոբ, Արուս, Արս. Բ., Մ. Սեղանաւոր, Կայծ, Վահէ, Կորիւն, Ա. Բ, Ժուռ, Քաք-քաք, Համբ Զոր. (Բէօ) 20-ական, Արս., Կամ, Ժպտունի, Շանէն, Աշոտ, Արամ, Մարմ., Գուլպ., Կրէտէ, Սեպ. Ա., Հայ, Խայծ 10-ական, Ոյժ, Վառօղ, Զոփուր, Պանդուխտ 5-ական: Դումար 647 դրամ:

Ա Պ ա ր ի ս պ ի կազմին միջոցով.—Նուիրատուներն են՝ Գ. Բ. 20 դրամ., Կրպ. Պ, Համբ. Խ., Պող. Մալ., Արմ Պետ., Միհր Պ., Բարկոմ, Ար. Խաչմ., Քեր. Տէր Գաբ., Յովակ. Զալ., Սուր. Թող., Յով. Տօնիկ 10-ական, Անդր. Անդր., Յար. Պոյան., Սար. Պետիկ., Միհ. Տէր Գաբ., Դ. Սէրմ., Կար. Պետ., Յովհ. Տօնիկ, Յովհ. Պոյ., Անդր. Թ., Յովակ. Սամ., Ման. Կակ. Կար. Պող., Դամր. Տ. Գաբր. 5-ական: Դումար 195 դրամ.:

Կ ղ զ ի ա ա ե է ն ի կոմիտէին միջոցով. — Նուիրատուներն են՝ Արս. Կ. 10, Յակ. Կար. 40. Խաչ. Թ. 20, Ստ. Ար. 20, Մար. Թ. 20, Յար. Քիւփ. 10, Յակ. Շահ. 40, Մ. Ա. Սար. 40, Թորգոմ 20. Անդր. Մէր. 54, Ներ. Արթ. 10, Միհրի 10. Հեքում 20, Մ. Արծր. 10, Նաստեան 216, Մկր. Սազ. 54, Յովհ. Փիլոզ. 40, Ցկբ. Շիր. 20, Արս. Տ. 10, Անդր. Պէյրզ 20, Տ. Մ. Թ. 40, Յարս 20, Շահնազարս 10, Սուր Ռա. 10, Մել. Յ. 10, Լ. Ա Գաս. 20, Մէն-Տիրան 30, Արիս 20, Սէտա 20, Միհր. Սազ. 10, Խ. Թոփ. 10, Ա. Ս. 15. Յ. Անճ. 10, ինը կինեբէ 10 3 | 8, Հրայր 20, Պետրոս 48. Ռմն 100, Պ. Սուրակ 20, Վահ. Կրն. 10, Վարդ-Վրէժ 10, Հինգ կինեբէ 23, Հինգ օրիորդներէ 25. Ռմն 47, Օրիորդ Ա. 5, Պ. Խ. 20, Վաղ. Արմ. 20, Գր. Գ. 20, Ս. Աբ. 10. Գր. Ռզ. 20, Պետ. Բր. 20, Արս. Տօն. 10 Գերմ եւ ընտրուս 10, Եր. Փան. 10, Սեդր. Շ. 10, Ներ. Աղ. 20. Ներ. Գոյ. 20, Ստ. Սիսկ. 20, Պետ. Վ. 10, Յակ. Զօր. 10, Արփի 5, Կարս եւ սէր 10, Շահնուր 5, Սուր Ֆ. 10, Զար. Պար. 10, Ֆարհաս 20, Յակ. Կար. 10, Միհր. Կար. 10, Տէր եւ Տիկին Յովհ. Յ. 20 Զ. Պէր. 40, Յովհ. Կր. 10, Զ. Կօն. 20, Սեդր. Սազ. 20, Առ. Ռս. 10. Զար. Կէն. 40, Սեդ. Մա. 40, Սուր. Թիր. 20. Ստ. Մալ. 108, Ա. Նեկ. 10, Մ. Թոփ. 54, Յովհ. Պ. 20, Պետ. Թ. 20, Սեր. Զ. 20, Յակ. Մարս. 20, Պետ. Պրուս. 5, Զար. Պար. 10, Ստ. Պ. 10, Վահ. Եր. 10, Ասմ. Նեկ. 10, Յր. Եա. 10, Օ. Գ. 5, Վահազն 5, Ս. Գնունի 5, Վ. Նորայր 5. Հրուշան 5, Կորիւն 5, Վարժ 5, Վրոյր 5, Անդր. Քէս. 10, Սուր. Գր. 10, Վահ. Պին. 5, Պետ. Ակ. 10, Օ. Ան. 10. Յովհ. Մուր. 10, Շահնուր 10, Համբ. Խ. 30, Հրայր 27, Արմ. Փ. 5, Կրպ. Կիւլ 20, Վ. Գ. 20, Վ. Գոյ. 10, Հայկ. Պող. 5, Աբս. Պար. 10, Տիգր. Տէր. 20, Վահ. Պին. 5, Վահ. Կամ. 10, Գր. Գար. 10, Տիգր. Պող. 5, Հայկ Պ. 5, Մին. Եղ. 5, Մ. Շիր 20: Դումար 2376 դրամ:

(Շարունակելի)